

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱՎԹԻ ԵՎ ԳԱԶԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ
ՆԱՎԹԻ ԵՎ ԳԱԶԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

«ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱՎԹԻ ԵՎ ԳԱԶԻ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ ԳԼ Խ. ՏՆՕՐԵՆ

Դ.ՍԱՀԱԿՅԱՆ

Երևան 2018

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Օգտակար հանածոյի պաշարներ՝ օգտակար հանածոյի կուտակումներ, որոնց ծավալը, քանակը, որակը և տարածքային դիրքն ու ձևը որոշված են

Հանքավայր՝ ընդերքի մաս, որը պարունակում է օգտակար հանածոյի պաշարներ (այդ թվում՝ կանխատեսումային), որոնք ստացել են երկրաբանատնտեսագիտական գնահատական.

Օգտակար հանածոյի երևակում՝ ընդերքի տեղամաս, որում հայտնաբերվել է օգտակար հանածոյի առկայություն, որի քանակը, որակը և արդյունաբերական նշանակությունը դեռ որոշված չեն

Օգտակար հանածոյի արդյունահանում՝ օգտակար հանածոյի դուրսբերումը հանքավայրերից և դրանց մեջ պարփակված օգտակար բաղադրիչների կորզմանն ուղղված աշխատանքների համալիր

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատական՝ երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակարա հանածոների արդյունահանման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների բացահայտում և գնահատում

Բնապահպանական միջոցառումների ծրագիր՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման/կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ

Բնապահպանական կառավարման պլան՝ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում

Կարմիր գիրք՝ հազվագյուտ և ոչնչացման վտանգի տակ գտնվող կենդանիների, բույսերի և սնկերի լրացման, խմբագրման ենթակա ցուցակ

Հող՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար

համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական
հատկանիշներ ու հատկություններ

Հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է
հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով

Ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման
համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2
փուլով՝ տեխնիկական և կենսաբանական

Ազդակիր համայնք՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրությամբ փաստաթղթի կամ
նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի
(համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք

Խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի
վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

▪ ***Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը***

Նախատեսվող գործունեության նպատակն է բացահայտել խորքային ճեղքավորությունների տարածական դիրքը, որոշել դրանց ձևը և կառուցվածքը, կազմել ապարների հավաքիչ հատկությունների (коллектор) քատեզները, ըստ առանձին պարամետրերի՝ ծակոտկենության, թափանցելիության, կարբոնատացման և կառուցել ճեղքավորված դաշտի կառուցվածքային կտրվածքները և գնահատել առանձնացված օբյեկտներում նավթագազաբերությունը:

ՀՀ նավթի և գազի հետախուզական 2-րդ պայմանական տարածքը ներառում է ՀՀ կենտրոնական հատվածը՝ Երևան քաղաքը, ՀՀ Արմավիրի, ՀՀ Արագածոտնի մարզերը ամբողջությամբ, ՀՀ Արարատի, ՀՀ Կոտայքի և ՀՀ Շիրակի մարզերի տարածքները մասնակի՝ ընդհանուր մակերեսը շուրջ 7250կմ²: Առաջին փուլի աշխատանքները՝ երկրաֆիզիկական մեթոդներով տեղանքի ուսումնասիրությունները կատարվելու են ՀՀ Արմավիրի մարզի Տավորիկ, Հուշակերտ, Նոր Ամասիա, Նոր Արմավիր, Նոր Կեսարիա և Նալբանդյան, ՀՀ Արագածոտնի մարզի Օրգով, Բյուրական և Տեղեր, ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ համայնքների տարածքներում:

Ծրագրավորվող աշխատանքների հիմնական նպատակներից է.

- առանձնացնել գեոմիջավայրի ինտենսիվ ճեղքավորված հիմնական սուբուղղահայաց գոտիներ, որոնք կարող են հանդիսանալ ֆլուիդահոսանքների միգրացիայի ուղիներ
- ուսումնասիրել և կազմել ապարների հավաքիչների հատկությունների (коллектор) քատեզներ, ըստ առանձին պարամետրերի՝ ծակոտկենության, թափանցելիության, կարբոնատացման
- հիմնական հետամտվող հորիզոններով կառուցել ճեղքավորված դաշտի կառուցվածքային կտրվածքներ,
- գնահատել առանձնացված օբյեկտներում նավթագազաբերության հեռանկարները, ինչպես դրանց առկայությունը, այնպես էլ դրանց բաշխումը ըստ խորության:

▪ ***Նախատեսվող գործունեության բնութագիրը***

«Էներգո Ինվեստ Հոլդինգ» ՓԲ ընկերությունը նավթի և գազի հետախուզական երկրորդ պայմանական տարածքում երկրաբանական ուսումնասիրությունը նախատեսում է իրականացնել հետևյալ մեթոդաբանությամբ.

- տվյալների հավաքագրում՝ հավաքել և ամփոփել բոլոր առկա երկրաբանական, երկրաֆիզիկական և երկրաքիմիական տվյալները,
- երկրաբանական, հանույթային և երկրաքիմիական աշխատանքների իրականացում,
- տարածքի սեյսմիկ տեղագնման՝ տատանման ալիքների աղբյուրների և ընդունման կետի տեղադրման հնարավոր տեղամասերի ընտրություն,
- գրավիհետախուզական (պրոֆիլային) աշխատանքների իրականացում՝ սեյսմոհետախուզական աշխատանքների հետ զուգընթաց
- գեոդեզիական հենակետային ցանցի ստեղծում,
- փորձնական աշխատանքների իրականացում՝ նպատակ ունենալով ընտրել նորագույն սարքավորումների՝ ընդունիչ կայանի, տատանման աղբյուրի, ինչպես նաև դիտարկումների ամենահամապատասխան բնութագրերը ընտրելու համար:

Երկրաբանական երթուղիների տվյալների արդյունքները կհամադրվեն արբանակային լուսանկարների վերծանումների հետ:

Սեյսմիկ հետազոտությունները նախատեսվում է իրականացնել Ընդհանուր խորքային կետ (OFT) մեթոդով՝ «Πορσεcc-Π» սեյսմոկայանի և BV620 սեյսմիկ վիբրոտորի միջոցով, ընդունիչ կայանի, տատանման աղբյուրի, ինչպես նաև դիտարկումների ամենահամապատասխան բնութագրերը ընտրելուց հետո:

Դաշտային աշխատանքների դրական արդյունքի դեպքում նախատեսվում հորատել 1 որոնողահետախուզական հորատանցք:

Գեոդեզիական հենակետային ցանցի ստեղծման համար բոլոր դաշտային կոորդինատները կգրանցվեն GPS-նավիգատոր համակարգի ձեռքի սարքերով:

▪ ***Նախագծման նորմատիվ-իրավական հենքը***

Նավթի և գազի երկրորդ պայմանական տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է

բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են հետևյալ իրավական ակտերում.

- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (01.11.1994թ.),
- «Բուսական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (23.11.1999թ.),
- «Կենդանական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (03.04.2000թ.),
- Հայաստանի Հանրապետության «Հողային» օրենսգիրք (02.05.2001թ.),
- Հայաստանի Հանրապետության «Զրային» օրենսգիրք (04.06.2002թ.)
- «Ընդերքի մասին Հայաստանի Հանրապետության օրենսգիրք» ՀՀ օրենք (01.01.2012թ.),
- Հայաստանի Հանրապետության «Անտառային» օրենսգիրք (24.10.2005թ.),
- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (27.11.2006թ.),
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (09.08.2014թ.) ,
- «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N 72-Ն որոշում,
- «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N 71-Ն որոշում,
- «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի N 781-Ն որոշում:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

▪ *Գտնվելու վայրը*

Ընկերության կողմից նավթի և գազի երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող 2-րդ պայմանական տարածքը բնութագրվում է հետևյալ աշխարհագրական կոորդինատներով.

B 44°45' արևելյան երկայնության և 40°40' հյուսիսային լայնության

A 40°40' հյուսիսային լայնության և Հայաստան-Թուրքի սահմանի հետ հատման կետ

H 44°45' արևելյան երկայնության և 40°20' հյուսիսային լայնության

H' 44°50' արևելյան երկայնության և 40°20' հյուսիսային լայնության

N 44°50' արևելյան երկայնության և 40°05' հյուսիսային լայնության

N' 44°50' արևելյան երկայնության և 40°20' հյուսիսային լայնության

M 44°45' արևելյան երկայնության և դեպի հարավ Հայաստան-Թուրքի սահմանի հետ հատման կետ:

Երկրորդ պայմանական տարածքի Arm WGS-84 համակարգով արտահայտված կոորդինատներն են.

1. Y=8394335 X=4505877 /Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի սահման/

2. Y=8476285 X=4505877

3. Y=8476285 X=4461295

4. Y=8485852 X=4461295


5. Y=8485852 X=4432960

6. Y=8477495 X=4432960

7. Y=8477466 X=4401765 /Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի սահման/:

Երկրորդ պայմանական տարածքի սխեմատիկ իրադրային հատակագծերը ներկայացված են ստորև նկար 1-ում:

Առաջին փուլի աշխատանքները՝ երկրաֆիզիկական մեթոդներով տեղագնությունները կատարվելու են ՀՀ Արմավիրի մարզի Տավորիկ, Հուշակերտ, Նոր Ամասիա, Նոր Արմավիր, Նոր Կեսարիա և Նալբանդյան, ՀՀ Արագածոտնի մարզի Օրգով, Բյուրական և Տեղեր, ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ համայնքների տարածքներում:



Նկար 1.

Սեյսմիկ տեղազննումների համար նախատեսված տարածքի կոորդինատներն են (Arm WGS-84 համակարգով).

ՀՀ Արագածոտնի մարզ	ՀՀ Արմավիրի մարզ	ՀՀ Կոտայքի մարզ
8431580, 4480096	8403565, 4438695	8454386, 4472889
8432052, 4480179	8403565, 4439195	8454386, 4473389
8434454, 4469068	8414933, 4439195	8465718, 4473320
8433965, 4468962	8414943, 4438801	8465719, 4472820
8431580, 4480096	8403565, 438695	8454386, 4472889

Վարչատարածքային բաժանման տեսակետից նավթի և գազի երկրաբանական ուսումնասիրության նապատակով հայցվող տարածքի խոշոր բնակավայրերն են.

- Մայրաքաղաք **Երևանը** իր 12 վարչական շրջանների՝ Աջափնյակ, Ավան, Արաբկիր, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեփաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ, Քանաքեռ-Զեյթուն: Մայրաքաղաքի բնակչությունը 1 մլն 113

հազար է, որը Հայաստանի Հանրապետության բնակչության ավելի քան 34,0% -ն է, իսկ Հայաստանի մարզերից օրական Երևան ժամանող և մեկնող քաղաքացիների թիվը կազմում է 400,0-450,0 հազար մարդ: Երևանը Հայաստանի խոշորագույն տնտեսական, գիտական և մշակութային կենտրոնն է, հանդիսանում է տարածաշրջանային փոխադրումների կարևորագույն տրանսպորտային և տարանցիկ հանգույց: Հանրապետության տնտեսական ակտիվ բնակչության 29,0%-ի պայմաններում (345.9 հազար մարդ) մայրաքաղաքի տեսակարար կշիռը հանրապետության համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) կառուցվածքում կազմում է շուրջ 52,0%-ը, արտադրական հզորությունների գրեթե կեսը, շինարարության ոլորտի՝ 88,0%-ը շահագործման հանձնված բնակելի տների 84,0%-ը, արդյունաբերության արտադրանքի 49,0%-ը, (այդ թվում մշակող արդյունաբերության 61,0%-ը), մանրածախ ապրանքաշրջանառության 84,0%-ը, հանրային ծառայությունների ծավալի 91,0%-ը, այդ թվում հյուրանոցների ծառայությունների 89,9%-ը, տրանսպորտի ծառայությունների 89,1%-ը, ֆինանսական գործունեության 97,0%-ը, անշարժ գույքի հետ կապված գործառույթների 87,0%-ը, տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառի ծառայությունների 99,0%-ը, արտահանման 52,0%-ը, ներմուծման 82,0%-ը: Երևանի զարգացման 2010-2013թթ. ծրագիր 4 Երևանի սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացման ասպարեզում զգալի նշանակություն ունի նաև այն հանգամանքը, որ այստեղ են գտնվում Հայաստանի Հանրապետության նախագահի նստավայրը, Հանրապետության Ազգային ժողովն ու կառավարությունը, բոլոր նախարարությունները և պետական կառավարման մարմինները, հասարակական կազմակերպությունների, տարբեր միությունների, հիմնադրամների, զանգվածային լրատվության միջոցների գերակշիռ մասը: Քաղաքում են գործում Գիտությունների ազգային ակադեմիան և իր էությամբ եզակի՝ հին ձեռագրերի կենտրոն Մատենադարանը, տասնյակ գիտական հաստատություններ, շուրջ 70 համալսարաններ և ինստիտուտներ, երկու տասնյակ թատրոններ և մոտ 60 թանգարան, համերգասրահներ, մարզական կենտրոններ, 21 եկեղեցի: Մայրաքաղաքում են գտնվում օտարերկրյա պետությունների 25 դեսպանատներ և 21 հյուպատոսություններ, արտերկրյա ֆինանսական, հասարակական և մշակութային

հաստատությունների հայաստանյան գրասենյակներ, Հայաստանում գործող քանկերը, ֆինանսական հաստատությունները:

- **Արթիկը**, որը ՀՀ Շիրակի մարզի 2-րդ քաղաքն է: Արթիկի տարածքները հարուստ են նաև այլ օգտական հանածոներով՝ պեմզա, պերլիտ, հրաբխային խարամ, կավեր և այլն: Արթիկը տեղակայված է Հայաստանի հյուսիս-արևմուտքում, Արագած լեռան հյուսիս-արևմտյան լանջին: Քաղաքը գտնվում է լեռնատափաստանային բնական գոտում և շրջապատված է չքնաղ լեռնային բնապատկերով: Համայնքի միջով հոսում են Մանթաշ գետի Գոմշաձոր և Մովրովի վտակները: Քաղաքը հարուստ է ժայռերից և գետնի տակից բխող աղբյուրներով: Արթիկի վարչական տարածքը կազմում է 3278հա, քաղաքի կառուցապատված մակերեսը՝ 700հա: Արթիկի բնակչությունը կազմում է 19760 մարդ: Համայնքում գործում է 4 նախակրթարան, 6 հիմնական, 2 ավագ և 1 հատուկ դպրոց, 1 գեղագիտական դաստիարակության կենտրոն, 1 գեղարվեստի դպրոց, 1 երաժշտական դպրոց, 3 բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ, 2 մշակույթի կենտրոն, 2 մարզադպրոց և 1 մարզահամալիր: Արթիկում ավանդաբար զարգացած է հանքարդյունաբերությունը և քարի վերամշակման արտադրությունը: Համայնքում գործում են միջին և մանր ձեռնարկություններ, որոնք արտադրում են վակուումային էլեկտրավառարաններ, մետաղական կառուցվածքներ, ապակե տարրաներ, տրիկոտաժ արտադրանք, կահույք, հացամթերք և հրուշակեղեն, կաթնամթերք և արդյունաբերական այլ արտադրանք:

- **Ապարանը** գտնվում է Արագած լեռնազանգվածի արևելյան փեշերին: Ծովի մակարդակից բարձրությունը կազմում է 1880 մետր: Կլիման բարեխառն լեռնային է: Ձմեռները տևական են՝ ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառները տաք են՝ համեմատաբար խոնավ: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է պյուս 17-18 աստիճանների, իսկ հունվարյանը՝ մինուս 6-8 աստիճանների միջև ըստ Ցելսիուսի սանդակի: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը կազմում է 450-600 միլիմետր: Ըստ Ազգային վիճակագրական ծառայության 2005թ. տվյալների, առկա բնակչությունը կազմում է 5711 մարդ, որից 47 տոկոսը տղամարդիկ են, 53 տոկոսը կանայք: Համայնքն ունի 3 դպրոց, մեկ երաժշտական դպրոց, մշակույթի տուն, գրադարաններ, հիվանդանոց, պոլիկլինիկա, կապի հանգույց:

Քաղաքի տնտեսությունը սկսել է արագ զարգանալ 1950-ական թթ.: Տնտեսության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում արդյունաբերությունը: Ապարանում կան մի շարք ձեռնարկություններ: Այստեղ է գործում «Հայգորգ» ձեռնարկությունը, որը զբաղվում է գորգերի և կարպետների արտադրությամբ: Քաղաքում գործում են կենցաղային իրերի, սարքավորումների, տեքստիլ-գալանտերեական արտադրանքի ձեռնարկություններ: Այստեղ զարգացած է նաև սննդի արդյունաբերությունը, գործում է կաթնամթերքի վերամշակման և պանրի արտադրության գործարան:

Համայնքի հողերը հիմնականում օգտագործվում են որպես վարելահողեր, խոտհարքեր եւ արոտավայրեր: Մեփականաշնորհված է համայնքի մակերեսի մոտ 35 տոկոսը: Պահուստային նշանակության հողերից վարելահողերը զբաղեցնում են 38 հեկտար, արոտավայրերը՝ 415 հեկտար: Համայնքում նաև զբաղվում են հացահատիկային, կերային, բանջարաբուստանային կուլտուրաների մշակությամբ: Կան նաև բազմամյա տնկարկներ, սակայն դրանք մեծ մակերես չեն զբաղեցնում: Ապարանում զբաղվում են նաև անասնապահությամբ: Զարգացած է կաթնամսատու ուղղությունը, հումքը վերամշակվում է տեղի պանրի գործարանում:

- ՀՀ Արագածոտնի մարզի մարզկենտրոն ***Աշտարակը***: Զբաղեցնում է 42,33կմ² տարածք: Քաղաքի առկա բնակչությունը կազմում է 25607 մարդ, որից 47% տղամարդիկ են, 53%՝ կանայք: Աշտարակը ունի միջնակարգ դպրոցներ, երաժշտական եւ մարզական դպրոցներ, մանկապարտեզներ, մշակույթի տուն, գրադարաններ, մարզադաշտ, հիվանդանոց, պոլիկլինիկա, կապի հանգույց: Տնտեսության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում արդյունաբերությունը: Այստեղ կան տարբեր ճյուղերի ձեռնարկություններ: Այստեղ գործում է «Միկրոմ» ձեռնարկությունը, որը զբաղվում է փորձասարքերի, արբանյակային ալեհավաքների, գունանյութի եւ ներկերի, շինարարական սալիկների արտադրությամբ: Ունի պոլիէթիլենային տարաների արտադրություն, պոլիգրաֆիական գործարան, որը զբաղվում է տպագրական իրերի արտադրությամբ: Զարգացած է սննդի արդյունաբերությունը: Այստեղ կան խաղողի վերամշակման եւ գինու հումքի ստացման կետեր: Հնուց Աշտարակը հայտնի է անուշահամ գինիների եւ չոր մրգերի պատրաստմամբ:

Գյուղատնտեսությունը նույնպես զարգացած է, հատկապես պտղաբուծությունը եւ

խաղողագործությունը: Հողահանդակները հիմնականում ոռոգվում են Քասաղի ջրերով: Պահուստային հողերում բազմամյա տնկարկները կազմում են 58 հա, արոտավայրերը՝ 433 հա: Մշակում են նաև հացահատիկային, բանջարաբոստանային կուլտուրաներ: Զբաղվում են խոշոր եղջերավոր անասնապահությամբ, թռչնաբուծությամբ: Ունի թռչնի մսի եւ ձվի արտադրություն:

- **Աբովյան** քաղաքը, որն ունի ավելի քան 50 հազար բնակիչ և գրավում է 1095,23հա տարածք: Աբովյանում գրանցված են 234 արտադրական ձեռնարկություններ, գործում են 14 կրթական, 5 մշակութային և 2 մարզական հաստատություններ: Աբովյան քաղաքը արդյունաբերական կերտրոն է: Գործում են երկաթբետոնե կառուցվածքների, քարերի մշակման, կենսաքիմիական պատրաստուկների գործարանները, բազմաթիվ մասնավոր ընկերություններ: Աբովյանում է գտնվում հանրապետական տուրերկուլյոգային կլինիկական հիվանդանոցը, Գիտությունների ազգային ակադեմիայի մանրէակենսաբանության ինստիտուտը:

- **Չարենցավանը**, որը խոշորացումից հետո գրավում է 245,3 կմ² տարածք և ունի 39335 մարդ բնակչություն: Համայնքի կրթական հաստատություններն են 5 հիմնական դպրոց, 1 ավագ դպրոց, պետական քոլեջ: Մշակութային հաստատություններն են Գառզուի անվան արվեստի դպրոց, Ա.Խաչատուրյանի անվան երաժշտական դպրոց, քաղաքային գրադարան, իսկ մարզական հաստատությունները՝ Ա.Մանուկյանի անվան մարզադպրոցը: Չարենցավանում գործող արտադրական ձեռնարկություններն են, «Արմավտո» ԲԲԸ, «Հաստոցաշինական գործարան» ՓԲԸ, «Բջնի» հանքային ջրերի գործարան ԲԲԸ, «Գործիքաշինական գործարան» ԲԲԸ, «Ասկե Գրուպ»ԲԲԸ, «Ձուլակենտրոն» ԲԲԸ, «Հոլանի» ԲԲԸ /կարի ֆաբրիկա/:

- ՀՀ Արարատի մարզի մարզկենտրոն **Արտաշատ** քաղաքը (2013թ. տարեվերջին՝ 22.0 հազ. բնակիչ), որը գտնվում է Երևանից 30 կմ հեռավորության վրա և զբաղեցնում է 800 հա տարածք: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ հատկապես առանձնանում են սննդամթերքի և ըմպելիքի արտադրությունը (մրգերի բանջարեղենի վերամշակում և պահածոյացում, թորած ալկոհոլային խմիչքներ), ինչպես նաև ոչ մետաղական հանքային այլ արտադրանքի արտադրությունը՝ կոմինդրի, աղյուսի և թրծված կավից շինարարական արտադրատեսակների, բնական քարերից երեսպատման նյութերի

արտադրությունը: Քաղաքի տնտեսական կյանքում էական դեր ունի նաև գյուղատնտեսությունը, որի հիմնական ուղղությունը բուսաբուծությունն է:

- **Արարատ** քաղաքը, որը հայտնի է որպես արդյունաբերական կենտրոն: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ իր գերակշիռ տեղն ունի ոչ մետաղական հանքային և այլ արտադրանքի արտադրությունը (ցեմենտի, կրի և ասբո-ցեմենտային իրերի արտադրությունը):

- **Վեդի** քաղաքը գտնվում է Վեդի գետի աջ ափին, Երևանից 48կմ հեռավորության վրա: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որում կարևոր տեղ է զբաղեցնում բնական քարերից երեսապատման նյութերի, էլեկտրական և հսկիչ սարքերի ու սարքավորումների, պլաստմասաներից պատրաստվող շինարարական իրերի արտադրությունը: Քաղաքի տնտեսական կյանքում էական դեր ունի նաև գյուղատնտեսությունը, որի հիմնական ուղղությունը դաշտավարությունն է:

- **Մասիս** քաղաքը, որը խոշոր երկաթուղային ապրանքային կայան է, որն ունի միջմարզային նշանակություն և սպասարկում է Երևան քաղաքին: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ է զբաղեցնում սննդամթերքի արտադրությունը (մրգերի և բանջարեղենի վերամշակում և պահածոյացում), թղթից և սովարաթղթից արտադրատեսակների արտադրություն և ծխախոտի ապրանքների արտադրությունը (ծխախոտի խմորում՝ ֆերմենտացիա):

- **Էջմիածին** քաղաքային համայնքը, որի մակերեսը կազմում է 4424.82հա, իսկ բնակչությունը՝ 57600 մարդ: Համայնքում գործում են 14 դպրոց, 8 մանկապարտեզ, 1 համալսարան, 1 քոլեջ, 1 ճեմանար, 1 գիտատեխնիկական ինստիտուտ: Առկա թ 1 մշակույթի պալատ, 4 թանգարան, 2 երաժշտական դպրոց, 1 գեղարվեստի դպրոց, 8 գրադարան: Բնակչության հիմնական զբաղմունքը սպասարկումն է, գյուղատնտեսությունը, արդյունաբերությունը, տրանսպորտն և կապը, տեղական ինքնակառավարման մարմինները:

- **Արմավիր** համայնքի մակերեսը 2181.99հա, բնակչության թիվը՝ 37053հա, տնային տնտեսությունների թիվը՝ 8000: Կան մի շարք պահածոների, գինու, կոնյակի գործարաններ: Ունի խորդենու վերամշակման գործարան, միակը ամբողջ

Հայաստանում: 1966 թ-ից գործում է կոնյակի գործարանը: Արտադրվում են նաև Վերմուտ տեսակի գինիներ: Ունի նաև կարի արտադրամաս: Ծանր արդյունաբերությունից զարգացած է շինանյութերի արտադրությունը: Հողային ֆոնդի մոտ 75% օգտագործվում է որպես բնակավայրի հողեր, որի կեսը տնամերձ հողերն են: Դրանք հանդիսանում են բանջարանոցներ և պտղատու, խաղողի այգիներ: Զբաղվում են տեխնիկական մշակաբույս հանդիսացող խորդենու վերամշակմամբ, որից ստանում են եթերայուղեր:

Նավթի և գազի երկրաբանական ուսումնասիրության համար առանձնացված 2-րդ պայմանական տարածքը բնութագրվում է զարգացած ենթակառուցվածքների առկայությամբ: ՀՀ Արագածոտնի մարզի տարածքով են անցնում հանրապետական նշանակության 3 ավտոխճուղիներ՝ Երևան-Աշտարակ-Թալին-Գյումրի, Երևան-Աշտարակ-Սպիտակ և Երևան-Արմավիր-Քարակերտ-Գյումրի, ՀՀ Արարատի մարզի տարածքով՝ հանրապետական նշանակության Երևան-Երասխ-Ղարաբաղ ավտոմայրուղին և Երևան-Երասխ երկաթուղին: ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր օգտագործման ճանապարհային ցանցի երկարությունը կազմում է 579.48 կմ որից՝ միջպետական նշանակության ավտոճանապարհներ 56.18 կմ և հանրապետական նշանակության ավտոճանապարհներ 267.2 կմ: ՀՀ Արմավիրի մարզի տարածքով անցնող Երևան-Թբիլիսի երկաթուղին մարզում ունի վեց կայարաններ՝ Էջմիածին, Սովետական, Արմավիր, Արաքս, Դալարիկ և Քարակերտ: ՀՀ Շիրակի մարզի տարածքով է անցնում Հայաստանը Վրաստանին կապող գլխավոր երկաթգիծը և Հյուսիս-Հարավ ավտոմայրուղին:

▪ *Ռելիեֆ, երկրաձևաբանություն*

Նավթի և գազի երկրաբանական ուսումնասիրության համար հայցվող պայմանական 2-րդ բլոկի երկրաձևաբանական կառուցվածքի վերաբերյալ համառոտ տեղեկությունները ներկայացված են ստորև:

ՀՀ Շիրակի մարզի ռելիեֆը հայցվող բլոկի սահմաններում ներկայացված է Շիրակի ծալքաբեկորային լեռնաշղթայով և Շիրակի դաշտով: Շիրակի դաշտը Գյումրիի միջլեռնային գոգավորության հատակային մասն է ՀՀ հյուսիս-արևմուտքում, Ախուրյան գետի միջին հոսանքի ավազանում: Հյուսիսում Շիրակի, արևելքում Փամբակի ծալքաբեկորավոր լեռնաշղթաներն են, հարավ-արևելքում

Շարայի լեռ (Կողգաթ) և Արագած հրաբխային զանգվածները: Արևմուտքում աստիճանաբար ձուլվում է Կարսի հրաբխային սարահարթին:

ՀՀ սահմաններում դաշտի երկարությունը մոտ 30 կմ է, լայնությունը՝ 20 կմ: Բարձրությունը 1400–1800 մ է: Կազմված է լճագետային նստվածքներից: Զգալի տարածություններ ծածկված են տուֆային լավաներով: Մակերևույթը արևելքում հարթ է, Ախուրյանի ու նրա վտակների հովիտներում՝ կտրտված (բնորոշ են սեղանաձև մնացորդային բարձրությունները):

Շիրակի լեռնաշղթա ձգվում է լայնակի ուղղությամբ՝ Ախուրյանի հովտից մինչև Զիչխանի ստորին հոսանքը: Երկարությունը 36 կմ է, միջին բարձրությունը՝ 2300 մ, առավելագույնը՝ 2556 մ (Եզնասարլեռ): Ձևավորվել է գոգածալքային կառույցի վրա:

ՀՀ Արմավիրի և ՀՀ Արարատի մարզերի տարածքը գտնվում է Արարատյան դաշտավայրի սահմաններում: Գեոմորֆոլոգիական տեսակետից դաշտավայրի այդ մասը իրենից ներկայացնում է նախալեռնաթեքվածքային, թույլ ալիքաձև հարթավայր: Ընդհանուր առմամբ, տարածքի ռելիեֆը հարթ է, աննշան, հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևմուտք բավական հավասարաչափ թեքվածությամբ: Հյուսիսում՝ տարածքը իրենից ներկայացնում է հրաբխային սարահարթ, հատված ձորակներով, ոչ խորը կիրճերով, որոնք հանդիսանում են մթնոլորտային տեղումների կոլլեկտորներ: Ծայրամասային արևելյան և հյուսիս-արևմտյան մասերում տարածքը ընդունում է բլրակային բնույթ:


ՀՀ Արագածոտնի մարզի կարևորագույն երկրաձևաբանական կառույցը Արագածի հրաբխային զանգվածն է: Այն շրջապատից մեկուսացած, վահանաձև փռված մի զանգված է՝ մոտ 200 կմ շրջագծով: Իր հովհարաձև տարածված լանջերի հետ միասին գրավում է մոտ 4000 կմ² տարածություն Արարատյան ու Շիրակի դաշտերի, Ախուրյանու Քասախ գետերի միջև: Ունի 400 մ խորությամբ և 3 կմ տրամագծով հսկա խառնարան, որի քայքայված պատերի մնացորդները կազմում են լեռան չորս կատարները: Խառնարանը հարավարևելյան կողմից բաց է և կապվում է շրջապատին: Կատարները դասավորված են կիսաշրջանաձև և կազմում են 270 աստիճանի աղեղ: Ամենաբարձրը հյուսիսային կատարն է (4090.1 մետր): Խառնարանը ջրահավաք մեծ ավազան է: Այստեղից է սկիզբ առնում Քասախի վտակ Գեղարոտ գետը: Արագածի ատամնաձև գագաթները ուղղաձիգ են, (հատկապես հյուսիսային կատարը, որ բավական դժվարամատույց է

վերելքի համար), իսկ լանջերը մեղմ թեքություն ունեն, որոնք փռված են գագաթների շուրջը հսկայական տարածությունների վրա՝ տեղ-տեղ կազմելով ընդարձակ բարձրավանդակներ, սարավանդներ, հարթություններ (Ապարանի դաշտը, Կարմրաշենի, Շամիրամի սարահարթերը, Օհանավանի, Մարալիկի սարավանդները և այլն), մասնատված են ճառագայթաձև տարածվող խոր հովիտներով, կիրճերով, հեղեղատներով: Լանջերին կան նաև հրաբխային ծագում ունեցող կոնաձև բարձրություններ (Փոքր Արտենի, Իրինդ, Կարմրաթառ, Դաշտաքար և այլն):

ՀՀ Կոտայքի մարզը հյուսիսից սահմանափակվում է Գուրանասար, իսկ հյուսիս-արևելքից՝ Հատիսի լեռնազանգվածներով: Հարավ-արևմուտքում աստիճանաբար ցածրանալով՝ ձուլվում է Արարատյան դաշտին: Կոտայքի սարավանդն ընկած է Հրազդան գետի միջին հոսանքի ձախափնյա մասից մինչև Գեղամա լեռների արևմտյան ստորոտը: Հիմնական լեռնագրական միավորներն են Կոտայքի և Եղվարդի բլրաալիքային սարավանդները, Մարմարիկի վտակներով կտրտված Փամբակի լեռնաշղթայի լանջերը, Գեղամա լեռնաշղթայի լեռնաճյուղերն ու լավային հոսքերը:

Երևանը գտնվում է Արարատյան դաշտի հյուսիս-արևելյան մասում, որի մակերևույթը հարթ տեղամասերի, հրաբխային սարավանդների և բլուրների համակցություն է՝ բաժանված Հրազդանի և գետառի կիրճերով: Քաղաքի տարածքում են Արին Բերդի, Կարմիր բլուրի, Կոնդի, Ծիծեռնակաբերդի, Նորքի և Քանաքեռի բարձունքները:

Նավտի և գազի երկրաբանական ուսումնասիրության համար հայցվող տարածքում հայտնի են բազմաթիվ սողանքային մարմիններ, որոնց տեղադիրքն արտացոլված է ստորև, նկար 2-ում: Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների մեթոդաբանության և ծավալների մշակման ժամանակ հաշվի են առնվել առկա տեղեկությունները սողանքային մարմինների տեղադիրքի և չափերի վերաբերյալ: Ծրագրավորվող աշխատանքները կիրականացվեմ այն տարածքներում, որտեղ չկան սողանքավտանգ տեղամասեր:



Նկար 2.

▪ *Կլիմա*

Նավթի և գազի երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող 2-րդ պայմանական տարածքում առկա են տարբեր կլիմայական բնութագրերով տարածքներ:

Երևանը գտնվում է տեղանքային 2 գոտում. 850-1000 մ բարձրություններում կլիման անապատային-կիսաանապատային է, ավելի բարձրում՝ չոր տափաստանային: Արևափայլի տևողությունը հասնում է 2700 ժամի: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը 8,8-11,6 աստիճան է, ջերմաստիճանի տարեկան միջին տատանումը՝ 31°: Ամառը տևում է 4 ամսից ավելի՝ չոր, շոգ եղանակով. օդի միջին ջերմաստիճանն օգոստոսին 22-26 աստիճան է, առավելագույնը՝ 41,4 աստիճան: Ամռանը զարգանում են լեռնահովտային քամիները, որոնք ուժգնանում են օրվա երկրորդ կեսին՝ երբեմն հասնելով 15-20 մ/վրկ.-ի: Ձմեռը չափավոր ցուրտ է. հաստատուն ձնածածկույթ առաջանում է ոչ ամեն տարի: Հունվարի միջին ջերմաստիճանը -4-ից -6 է, առավելագույնը՝ -31°C: Գերիշխում են թույլ քամիները: Գարունը կարճատև է, անկայուն եղանակով: Երևանին բնորոշ է մեղմ,

արևոտ, անհողմ աշունը: Տեղումների տարեկան միջին ծավալը 250-370 մմ է: Առավելագույն տեղումները լինում են մայիսին:

ՀՀ Կոտայքի մարզի տարածքում կլիման ըստ բարձրության փոխվում է տաք չոր ցամաքայինից մինչև ձյունամերձը: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը տատանվում է 10 °C-ից մինչև 2.5 °C: Տարվա ամենատաք ամիսը հուլիսն է, իսկ ամենացուրտը՝ հունվարը: Կոտայքի մարզի ցածրադիր շրջաններում միջին հունվարյան ջերմաստիճանը կազմում է 4.5-5 °C: Բարձրադիր շրջաններում հունվարյան ջերմաստիճանը նվազում է մեկ և ավելի ջերմաստիճանով՝ -3.6 °C: Կոտայքի մարզի բարձրադիր շրջաններում ամառվա ամենատաք ամսին գրանցվում է միջինում 8.7 °C ջերմություն: Ցածրադիր շրջանների եղանակային պայմանները բավականին տարբեր են: Ամառվա ամիսներին գրանցվում է բարձր ջերմություն հատկապես Արփյան և Հրազդան քաղաքներում: Միջին հուլիս-օգոստոսյան ջերմաստիճանը ցածրադիր գոտիներում կազմում է 22.2 °C և ավելի: Ամենացածր ջերմաստիճանը Հայաստանի Կոտայքի մարզում գրանցվում է Աժդահակ լեռան գագաթին: Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը նորմայից բարձր է՝ 400-970 մմ: Տարբեր ամիսներին տեղում է անձրև, կարկուտ, իսկ ձմեռային ամիսներին՝ ձյուն: Անսառնամանիք օրերի թիվը մարզի ստորին գոտում կազմում է շուրջ 200 օր:

ՀՀ Արագածոտնի մարզի տարածքն աչքի է ընկնում բնակլիմայական պայմանների բազմազանությամբ: Ըստ բարձրության տարեկան միջին ջերմաստիճանի և տեղումների քանակը խիստ տարբեր են: Արագածի գագաթամերձ շրջանում տեղումները տարեկան հասնում են 850-900 մմ, իսկ համեմատաբար ցածրադիր (1000 մ) բարձրություններում՝ 300մմ: Արարատյան դաշտավայրին հարող հատվածներում ամռանը տաք է, իսկ ձմռանը՝ չափավոր ցուրտ:

ՀՀ Շիրակի մարզի կլիման ընդհանուր առմամբ բարեխառն է, սակայն վերընթաց գոտիականության շնորհիվ այստեղ ձևավորվում են առանձին կլիմայական տիպեր՝ 1) բարեխառն, համեմատաբար տաք ամառով և չափավոր ցուրտ ձմեռով, 2) բարեխառն՝ մեղմ ամառներով և ցուրտ ձմեռներով, 3) չափավոր ցուրտ, կարճատև զով ամառներով և ցուրտ ձմեռներով և բարձրալեռնային ցուրտ: Ընդհանուր առմամբ մարզի տարածքում Արևափայլքի տարեկան միջին տևողությունը 1900 թվականից

(հյուսիսում) 2500 ժ է (Գյումրի): Հունվարի միջին ջերմաստիճանը հյուսիսում -12°C է, հարավում՝ -6°C , հուլիսինը համապատասխանաբար՝ 12°C և 20°C (առավելագույնը՝ 36°C): Աշոցքի սարահարթում է Հայաստանի Հանրապետության ամենացուրտ վայրը՝ Պաղակն է (նվազագույն ջերմաստիճանը՝ -42°C): Ձմռանը կլիմայի ձևավորման վրա որոշակի է Կարսի անտիցիկլոնի ազդեցությունը: Տարվա ցուրտ ժամանակաշրջանին բնորոշ են կայուն ձնածածկույթը, ձնաբքերն ու մառախուղը, ամռանը՝ ամպրոպները: Տարեկան տեղումները 450-900 մմ են: Տարվա ընթացքում ամպամած օրերի առավել մեծ քանակ նկատվում է դեկտեմբեր և հունվար ամիսներին: Գյումրիում տարվա ընթացքում միջինը ամպամած է 35 օր, այն դեպքում, երբ Արագած բ/լ կայանում այն կազմում է 52օր:

ՀՀ Արմավիրի մարզի կլիման խիստ ցամաքային է: Մթնոլորտային տեղումների քանակը չի գերազանցում 300 մմ: Ամառը շոգ է, տևական (4-5 ամիս): Հաճախ ջերմաստիճանը բարձրանում է մինչև $40-42^{\circ}\text{C}$: Բնորոշ են լեռնահովտային քամիները: Ձմեռը ցուրտ է, անամպ, անհողմ: Գարունը կարճատև է:


ՀՀ Արարատի մարզի կլիման չոր ցամաքային է, հունվարի միջին ջերմաստիճանը՝ -4°C -ից մինչև -12°C , հուլիսինը՝ $8-26^{\circ}\text{C}$, տարեկան տեղումները՝ 250-700 մմ է, վեգետացիայի շրջանը՝ 20-210 օր:

▪ *Մթնոլորտային օդ*

Նավթի և գազի երկրորդ պայմանական տարածքում մթնոլորտային օդի մոնիթորինգի դիտակայաններ գործում են Երևան և Չարենցավան քաղաքներում:

Երևան քաղաքում կատարվում են ընդհանուր փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է պասիվ նմուշառման 44 դիտակետ և 7 դիտակայան (№1, №2, №7, №8, №16-1 №18 և №19), որից երկուսում՝ №2 և №18 կատարվում են միայն ակտիվ (24-ժամյա), իսկ մնացած հինգ դիտակայանում (№1, №7, №8, №16-1 և №19)՝ ինչպես ակտիվ, այնպես էլ ավտոմատ դիտարկումներ (նկար 3):

Պասիվ նմուշառիչներով օդային ավազանի որակի դիտարկումներ կատարվում է նաև Չարենցավան քաղաքում: Քաղաքի 10 դիտակետից վերցված փորձանմուշների զննությա արդյունքներով մթնոլորտում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները (նկար 4):



Նկար 4.

▪ **Ջրային ռեսուրսներ**

Նավթի և գազի երկրաբանական ուսումնասիրության համար հայցվող պայմանական 2-րդ բլոկի տարածքի խոշորագույն ջրագրական միավորները Հրազդան, Քասախ և Արաքս գետերը:

Հրազդանը հանրապետության խոշորագույն ու կարևորագույն գետերից է՝ Արաքսի ձախ վտակը: Ունի 141կմ երկարություն: Ավազանի մակերեսը 2650կմ² է (առանց Սևանա լճի): Այն սկիզբ է առնում Սևանա լճից, հոսում հարավ-արևմտյան ընդհանուր ուղղությամբ, անցնում Գեղարքունիքի, Կոտայքի մարզերով, Երևան քաղաքով, Արարատի մարզով և թափվում Արաքսը: Վերին հոսանքում մոտ 20կմ հոսում է դեպի արևմուտք՝ այդ ընթացքում առաջացնելով գալարներ, միջին հոսանքում անցնում է նեղ ու խոր (120-150մ) կիրճով, ստորին հոսանքում ուղղվում է դեպի հարավ-արևելք, դուրս գալիս Արարատյան դաշտ, դառնում հանդարտահոս ու ծովի մակարդակից 820մ բարձրության վրա լցվում Արաքսը: Գետի ընդհանուր անկումը կազմում է 1100 մ: Խոշոր վտակներն են Մարմարիկը, Ծաղկաձորը, Դալարը, Արայի գետը, Գետառը:

Մնումը հիմնականում ստորգետնյա (51%) և հալոցքային (37%) է, վարարումը՝ գարնանը, հորդացումները՝ ամռանն ու աշնանը:

Հրազդան գետի բազմամյա միջին տարեկան հոսքի բնութագրիչները բերված են ստորև աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.

Գետը	Ծախսը, մ ³ /վ	Տարեկան հոսքը, մլն.մ ³	Հոսքի մոդուլը, լ/վ կմ ²	Հոսքի շերտի բարձրությունը, մմ	Հոսքի գործակիցը
Հրազդան	22.6	714	9.78	308	0.57

Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարության Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոնի տվյալների Հրազդան գետից վերցված փորձանմուշներում գերազանցել են նիտրիտ ամոնիում, սուլֆատ իոնների, ԹԿՊ₅, ԹՔՊ-ի, ալյումինի, վանադիումի, քրոմի, մանգանի, պղնձի և սելենի սահմանային թույլատրելի նորմաները:

Քասախ գետի երկարությունը 89 կմ է, ավազանի մակերեսը՝ 1480 կմ²: Քասախի ակունքները երկու փոքրիկ գետակներ (առվակներ) են, որոնցից մեկն սկսվում է Արագածից, իսկ մյուսը՝ Փամբակի լեռնալանջերից: Նրանք երկուսն էլ մեծ մասամբ հոսում են հարթ մարգագետիններով և ապա, միանալով միմյանց, առաջացնում Քասախ գետը:

Քասախը վերին հոսանքում դանդաղահոս է և սակավաջուր, իսկ միջին հոսանքում դառնում է բավական ջրառատ ու արագահոս: Այստեղ, հատկապես Աշտարակի և Օշական գյուղի շրջանում, նա հոսում է խոր ձորի միջով: Գետաբերանային մասում նա բաժանվում է մի քանի բազուկների և թափվում Սև ջուր: Ստորին հոսանքում՝ Արարատյան դաշտի սահմաններում, Քասախի ջրերը գրեթե ամբողջովին օգտագործվում են շրջակա գյուղերի ցանքատարածությունները և այգիները ոռոգելու համար: Այդ է պատճառը, որ այստեղ ամռան ամիսներին (ջրի ամենաուժեղ գոլորշիացումների շրջանում) Քասախը իսպառ ցամաքում է:

Քասախ գետի Ապարանից վերև, Աշտարակից վերև և ներքև հատվածներում ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս). Ապարանից վերև՝ պայմանավորված ԹՔՊ-ով և երկաթով, Աշտարակից վերև՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով, վանադիումով, Աշտարակից ներքև՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով, վանադիումով և ըհդհանուր ֆոսֆորով: Գետաբերանի հատվածում ջուրը «անբավարար» որակի է (4-րդ դաս). պայմանավորված նիտրատ իոնով:

Արաքս գետը սկիզբ է առնում Բյուրակն հրաբխային բարձրավանդակից (մոտ 3000մ բարձրությունից), մինչև Արարատյան դաշտ մտնելը հոսում է նեղ կիճերով, տեղ-տեղ՝ լայնացված հովտով, ունի մեծ անկում: Գետի երկարությունը 1720կմ է, ավազանը՝ 102 հազ.կմ²: Այն սնվում է ձնհալքի, անձրևների և ստորերկրյա ջրերից: Հորդանում է մարտից հունիս ամիսներին, առավելագույն ծախսը դիտվում է մայիսին: Առաջին հորդացումը կապված է ցածրադիր վայրերի ձնհալքի և գարնանային անձրևների հետ, երկրորդը ավելի երկարատև է ու բուռն, առաջանում է լեռներում ձնհալքի հետևանքով: Ամենացածր մակարդակները լինում են հուլիս-օգոստոսին և ձմռանը: Երրորդ թույլ արտահայտված հորդացումը կապված է աշնանային անձրևների հետ: Արաքս գետի բազմամյա միջին տարեկան հոսքի բնութագրիչները բերված են ստորև աղյուսակ 2-ում:

Գետը	Ծախսը, մ ³ /վ	Տարեկան հոսքը, մլն.մ ³	Հոսքի մոդուլը, լ/վ կմ ²	Հոսքի շերտի բարձրությունը, մմ	Հոսքի գործակիցը
Արաքս	86.2	272.4	3.90	123	-

▪ Հողեր

Նավթի և գազի երկրաբանական ուսումնասիրության համար հայցվող պայմանական 2-րդ բլոկի տարածքում զարգացած հողերի բնական տիպերի մասին հակիրճ տեղեկատվությունը ներկայացված է ստորև:

Նախալեռնային գոտում տարածված են շագանակագույն, մեծ մասամբ քարքարոտ, էրոզացված հողերը, որոնց մակերեսային քարքարոտությունը կազմում է 70.3%, որից 18.8%-ը՝ թույլ քարքարոտ, 17.0%՝ միջակ քարքարոտ, 34.5 %-ը՝ ուժեղ քարքարոտ: Շագանակագույն հողերն ձևավորվել են տիպիկ չոր տափաստանային բուսականության տակ, հրաբխային ապարների հողմահարված նյութերի, ինչպես նաև տեղակուտակ, ողողաբերուկ և հեղեղաբերուկ գոյացումների վրա: Հողաշերտի հզորությունը միջին հաշվով տատանվում է 30-50սմ-ի սահմաններում, ռելիեֆի իջվածքային մասերում հաճախ այն հասնում է 65-70սմ-ի: Ըստ մեխանիկական կազմի այս հողերը դասվում են միջակ և ծանր կավավազային տարատեսակների շարքին: Կախված ռելիեֆի պայմաններից և էռոզիայի ենթարկվածության աստիճանից՝ հանդիպում են ինչպես ավելի թեթև, այնպես էլ ծանր մեխանիկական կազմով հողեր:

Հողերի կլանման տարողությունը համեմատաբար ցածր է, որը պայմանավորված է հումուսի սակավ պարունակությամբ և թեթև կավավազային մեխանիկական կազմով:

Շագանակագույն հողերի ծավալային զանգվածը տատանվում է 1.24-1.48գ/սմ³-ի, տեսակարար զանգվածը՝ 2.50-2.65գ/սմ³-ի, ընդհանուր ծակոտկենությունը՝ 4.38-52.1, խոնավությունը՝ 20-30%-ի սահմաններում:

Կիսաանապատային գորշ հողերը ձևավորվել են տեղակուտակ, տեղակուտակ-ողողաբերուկային խճային և խճաբեկորային կարբոնատային

մայրտեսակների վրա: Այս հողերը ունեն հիմնականում կավավազային մեխանիկական կազմ, բավականաչափ կմախքային զանգվածի պարունակությամբ: Ստրուկտուրան փոշե-հատիկային կամ վառողանման է, ջրակայուն ագրեգատների քանակը չի գերազանցում 30-35%: Առանձին տեղերում հողի խորը շերտերում հաճախ բավական քանակությամբ ջրալույծ աղեր են կուտակվում (մինչև 1-1.5%), որոնք գլխավորապես ներկայացված են CaSO_4 , MgSO_4 և այլ աղեր:

Կիսաանապատային գորշ հողերը զարգանում են խիստ ցամաքային, շոգ կլիմայի և կիսաանապատային բուսածածկույթի պայմաններում, կարբոնատներով և խճով հարուստ ավազակավերի և թեթև կավավազների վրա: Բնորոշվում են վերին հորիզոնի շերտավոր-թեփուկային, իսկ միջին հորիզոնում՝ անկայուն կնձկային ստրուկտուրայով: Իյուվիալ-կարբոնատային հորիզոնի զգալի մասը խիստ ցեմենտացված է: Հողերն աչքի են ընկնում հումուսի փոքր քանակով (1-2%), միջին և ավելի փոքր կլանման ծավալով, թույլ հիմնային ռեակցիայով, քարքարոտությամբ և ուժեղ կարբոնատացվածությամբ: Հողերը հիմնականում ունեն սակավ հզորություն, միջին կավավազային (62%) մեխանիկական կազմ, ծավալային զանգվածը տատանվում է 1.24-1.48գ/սմ³ սահմաններում, տեսակարար զանգվածը՝ 1.34-1.42գ/սմ³, ընդհանուր ծակոտկենությունը՝ 46-48%:

Կիսաանապատային գորշ հողերի քիմիական և ֆիզիկաքիմիական հատկությունները բերված են ստորև աղյուսակ 3-ում.

Աղյուսակ 3.

Խորությունը, սմ	Տոկոսներով			Վլանված հիմքերի գումարը մ/էկվ 100գ հողում	pH-ը ջրային քաշվածքում
	հումուս	CO ₂	գիպս SO ₄		
0-8	2.10	1.3	0.05	22.0	8.0
8-21	1.81	4.7	0.08	30.5	8.3
21-32	1.55	10.6	0.5	23.6	8.2
32-65	0.87	15.5	0.8	18.3	8.1
65-140	0.22	2.2	42.1	-	7.3

Առկա են նաև աղուտ-ալկալի հողեր: Աղուտ-ալկալի հողերը աչքի են ընկնում խիստ թույլ հումուսացվածությամբ (մինչև 1%), բարձր հիմնայնությամբ, կարբոնատների զգալի պարունակությամբ (15-18%), շերտավորված մեխանիկական կազմով: Պրոֆիլում պարզորոշ առանձնացվում է մակերեսային աղային հորիզոնը,

որտեղ հեշտ լուծվող աղերի քանակը 2% և ավելի է, սակայն դեպի ստորին շերտերը նրա պարունակությունը նվազում է: Հողերի գերակշռող մասին հատկանշական է փոխանակային նատրիումի բարձր պարունակությունը (առանձին շերտերում 20-25 մգ/էկվ):

Մարգագետնային գորշ ոռոգելի հողերը տարածված են Արարատյան հարթավայրի համեմատաբար ցածրադիր թույլ թեք հարթություններում: Այս տիպի հողերում հողագոյացնող պրոցեսներն ընթացել են հիդրոմորֆ ռեժիմի պայմաններում:

Լեռնամարգագետնային հողերը ունեն լավ արտահայտված նուրբ հատիկավոր ստրուկտուրա, աղքատ են կարբոնատներից: Պարունակում են մեծ քանակության հումուս (18-25, երբեմն 25-30%): Հողաշերտի հզորությունը փոքր է, կախված ռելիեֆի պայմաններից հզորությունը տատանվում է 15-20-ից 40-50սմ-ի սահմաններում: Մեխանիկական կազմը հիմնականում կավավազային է, հողային լուծույթի ռեակցիան թթվային է, pH տատանվում է 4.5-6.4-ի սահմաններում:

Լեռնամարգագետնային հողերը բնորոշվում են մակերեսային և խորքային թաղված ուժեղ քարքարոտությամբ:

Լեռնաանտառային գոտու դարչնագույն անտառային հողերը բնութագրվում են դարչնագույն և մուգ-դարչնագույն գույնով, հումուսի բավական բարձր պարունակությամբ (10-14%), որը խորության ուղղությամբ արագ նվազում է: Հումինային նյութերում հումինաթթուների և ֆուլվոթուների քանակը գրեթե հավասար է:

Այս տիպի հողերը ունեն գլխավորապես կավավազային մեխանիկական կազմ: Կլանման տարողությունը բարձր է, կլանված կատիոններում գերակշռողը Ca-ն է: Ռեակցիան չեզոք է կամ թույլ հիմնային: Բնութագրվում են բարելավ ֆիզիկական և ջրաֆիզիկական հատկություններով, լավ արտահայտված ստրուկտուրայով:

▪ **Բուսական և կենդանական աշխարհ**

Նավթի և գազի երկրաբանական ուսումնասիրության համար հայցվող պայմանական 2-րդ բլոկի տարածքում զարգացած են բուսականության մարգագետնային, մարգագետնատափաստանային, տափաստանային, կիսաանապատային և անապատային տիպերը:

Մարգագետնային տիպի բուսականությունը ներկայացված է ցածր հացազգի և տարախոտահացազգային գորգերով՝ *Bromopsis*, *Hordeum*, *Betonika*, *Veronica*, *Myosotis* ցեղերի բուսատեսակների մասնակցությամբ, մարգագետնատափաստանային բուսականությունը բնորոշվում է *Phleum*, *Carex*, *Trifolium* ցեղերի բուսատեսակների մասնակցությամբ: Տափաստանային բուսականությունը ներկայացված է *Festuca*, *Koeleria*, *Stipa*, *Artemisia*, *Astragalus* տեսակներով: Կիսաանապատային բուսականության պետրոֆիլ տարբերակները ներկայացված են օշինդրա-էֆեմերային և հալոֆիլ, պսամոֆիլ անապատային բուսատեսակներով:

Կավա-խճաքարային հողերի վրա տարածված են կիսաանապատային համակեցությունները օշինդր բուրավետի (*Artemisia fragrans*) հետ, ինչպես նաև տարբեր հալո-գիպսոֆիտային համակեցությունները, որտեղ գերակշռում են օշանի տարբեր տեսակներ (*Salsola ericoides*, *Salsola dendroides*), որոնց հետ միասին աճում են աղածաղիկ նոսրատերև (*Halanthium rarifolium*), բորբոսատեսուկ (*Eurotia ceratoides*), անմեռուկ (*Xeranthemum squarrosum*), նոեան (*Noaea mucronata*), տերեփուկ երևանյան (*Centaurea erevanensis*) և այլն:

Գարնանը բազմաքանակ են էֆեմերները: Բավական մեծ տարածքների վրա ներկայացված է կիսաանապատային բուսականությունը, որտեղ օշինդրին ուղեկցում են կապար (*Capparis spinosa*), ոգնաթփերի տեսակները (*Acantholimon*), գազերը (*Astragalus*), Կոչի ուրցը (*Thymus kotschyanus*):

Անապատային և կիսաանապատային լանդշաֆտներին բնորոշ կենդանական տեսակներ են. երկկենցաղներից հանդիպում է լճային գորտը, սիրիական սխտորագորտը, կանաչ դողոշը, մողեսներից՝ կլորագլխիկը, օձագլխիկը և երկարաոտ սցինկը, օձերից՝ կույր օձուկը, ռնգեղջյուր օձը: Բազմազան են թռչունները և միջատները: Թիթեռներից բնորոշ են սատիրները, խոշոր առագաստաթիթեռները:



Anemonastrum fasciculatum(L.) Holub



Bromopsis variegata (Bieb.)



Artemisia vulgaris



Tanacetum achilleifolium



Poa bulbosa L. *Bromus*

Տափաստանային լանդշաֆտներում կենդանական աշխարհի ներկայացուցիչներից են. ճագարամուկը, նապաստակը, աղվեսը, գայլը, մողեսները, օձերը: Կաթնասուններից հանդիպում են սովորական և սարահարթային դաշտամուկը, սովորական աղվեսի հայկական ենթատեսակը: Մորեխներից քանակապես գերակշռում է սովորական իտալական մորեխը, բնորոշ են ձիուկներ և մթնաթներ, աղոթարար իրիսը: Բազմաթիվ են բզեզները՝ սև և փոսիկավոր կարաբուսներ, գերեզմանափորը, գլաֆիրուսները, բրոնզաբզեզները:

Ալպյան և ենթաալպյան մարգագետիններին բնորոշ տեսակներն են. երկկենցաղներից հանդիպում է լեռնային գորտը, սողուններից՝ ժայռային մողեսը: Առավել տարածված թռչուններն են ալպիական ճայուկները և և արտույտները, իսկ կրծողներից հանդիպում են սովորական և ձյան դաշտամուկը: Մորեխներից հայտնի է պտորոդոնտուսները, երկակնճիթներից՝ օտիորինոխուս սեռի տեսակները, Բիբերեշտեյնի կառաբուսը: Թիթեռներից բնորոշ են ապոլոնները, սատիրները, կապտաթիթեռները և սատուռնիան:

Լեռնատափաստանային գոտու ֆաունան համեմատաբար միատեսակ է և աղքատ, ինչը պայմանավորված է նրա ձևավորման երիտասարդ հասակով: Անողնաշարավորներից այստեղ հանդիպում են ծղրիղներ, մորեխներ, երկթևանիներ և բզեզներ, հերպետոֆաունայից առավել տարածված են մողեսները (*Lacerta armeniaca*, *L. dahli*, *L. nairensis* և այլն): Թռչնաշխարհում գերիշխում են ճնճղուկանմանները և ճուռականմանները: Այս գոտին առավել բարենպաստ են թփուտային դաշտամկան, աղվեսի, կուտորայի, գայլի համար: Որոշ կաթնասունների առկայությունը տափաստանային գոտում կրում է սեզոնային, կերային կամ բազմացման հետ կապված ընտրողականությունը:

Հանդիպում են կաղնուտներ և սոճուտներ՝ *Quercus macranthera* և *Pinus kochiana* Klotzsch ex K. Koch մասնակցությամբ:

▪ ***Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ***

Նավթի և գազի երկրաբանական ուսումնասիրության համար հայցվող պայմանական 2-րդ բլոկի տարածքում են գտնվում բնության հատուկ պահպանվող հետևյալ տարածքները.

- 1) «Խոսրովի անտառ» պետական արգելոց, որտեղ իրականացվում է չոր, նոսրանտառային, ֆրիգանային և կիսանապատային լանդշաֆտների, բուսական և կենդանական եզակի համակեցությունների պահպանություն՝ ավելի քան 1800 անոթավոր բույսեր, 210-ից ավելի ողնաշարավոր կենդանիների տեսակներ:
- 2) «Էրեբունի» պետական արգելոցը, որտեղ իրականացվում է Արարատյան հարթավայրի չորային (քսերոֆիտ) եզակի համալիրներին բնորոշ հազվագյուտ և անհետացող վայրի բույսերի ու կենդանիների տեսակների, հատկապես վայրի հացազգիների, այդ թվում՝ ցորենի հարյուրից ավելի տարատեսակների գենոֆոնդի և դրանց ապրելու միջավայրի պահպանությունը:
- 3) Հանքավանի ջրաբանական պետական արգելավայրը, որը կազմավորվել է 1981-ին, ունի 9350 հա տարածք: Գտնվում է ՀՀ Կոտայքի մարզում՝ Մարմարիկ գետի վերին ավազանում՝ Ծաղկունյաց լեռնաշղթայի լանջերին՝ ծովի մակարդակից 2000-2800 մ բարձրություններում: Ստեղծվել է՝ հանքային աղբյուրների («Հանքավան» հանքային ջուր և այլ ջրային պաշարների) սնման ավազանների պահպանության նպատակով:
- 4) Մարգահովիտի պետական արգելավայրը, որը գտնվում է Աղստև գետի ավազանում՝ Մարգահովիտ գյուղից դեպի Փամբակի լեռնաշղթայի հյուսիսային լանջերին ընկած տարածքում՝ ծովի մակարդակից 1900-2200 մ բարձրություններում: Ստեղծվել է խոնավասեր անտառների և դրանց բնորոշ կենդանական աշխարհի (այծյամ, գորշ արջ, կովկասյան մայրեհավ և այլն) պահպանության նպատակով:
- 5) Մրտավարդենու արգելավայրը, որը գտնվում է Փամբակի և Ծաղկունյաց լեռնաշղթաների հյուսիսային լանջերին՝ Աղստև գետի աջափնյակում

Մարգահովիտ գյուղից հարավ: Արգելավայրը ստեղծվել է կովկասյան մրտավարդենու մնացուկային թփերի պահպանության նպատակով:

- 6) Արագածի ալպիական արգելավայրում պահպանվող օբյեկտներն են Քարի լիճն ու ալպիական բուսականությունը: Մակերեսը՝ 300 հա: Կազմավորվել է 1959 թվականին: Գտնվում է Արագածի հարավային լանջին:
- 7) Արգական-Մեղրաձորի արգելավայրը հիմնադրվել է 1971 թ., զբաղեցնում է 13 532 հա տարածք, գտնվում է ՀՀ Կոտայքի մարզում, Դարալիկ և Մարմարիկ գետերի ավազաններում, ծովի մակարդակից 1600-2100 մ բարձրության վրա: Պահպանության օբյեկտներն են՝ անտառային հազվագյուտ կենդանիները (բծավոր եղջերու, գորշ արջ, կովկասյան մարեհավ):
- 8) Որդան կարմիր պետական արգելավայրը կազմավորվել է 1987-ին՝ Արարատյան դաշտում՝ Արգավանդ, Արագափ և Ալաշկերտ գյուղերի միջև՝ ծովի մակարդակից 900-950 մ բարձրություններում: Ստեղծվել է աղուտներում բնակվող որդան կարմիր էնդեմիկ միջատի (Հայկական լեռնաշխարհում գրեթե 3 հազարամյակ օգտագործվել է որպես կարմիր ներկ) պահպանության նպատակով:
- 9) Խոր Վիրապ պետական արգելոցը կազմավորվել է 25.01.2007թ.-ին, ունի 50.28 հա տարածք, գտնվում է ՀՀ Արարատի մարզ, Խոր Վիրապ եկեղեցական համալիրի հարևանությամբ, ծովի մակարդակից 800-890 մ բարձրության վրա: Ստեղծվել է խոնավ էկոհամակարգերը պահպանելու նպատակով:

Առաջին փուլի երկրաֆիզիկական մեթոդներով իրականացվելիք աշխատանքները կատարվելու են բնության հատուկ պահպանվող տարածքների սահմաններից դուրս: Որևիցե ազդեցություն պահպանվող էկոհամակարգերի վրա չի դրսևորվելու:

3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

- **Ենթակառուցվածքներ**

Ինչպես արդեն նշվել է, առաջին փուլի աշխատանքները՝ երկրաֆիզիկական մեթոդներով տեղանքի ուսումնասիրությունները կատարվելու են ՀՀ Արմավիրի մարզի Տավորիկ, Հուշակերտ, Նոր Ամասիա, Նոր Արմավիր, Նոր Կեսարիա և Նալբանդյան, ՀՀ Արագածոտնի մարզի Օրգով, Բյուրական և Տեղեր, ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ համայնքների տարածքներում:

ՀՀ Արմավիրի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի արևմտյան հատվածում: Մարզկենտրոնը Արմավիր քաղաքն է որի հեռավորությունը Երևանից 48կմ է: Մարզն ունի 3 քաղաքային (Արմավիր, Վաղարշապատ, Մեծամոր) և 94 գյուղական համայնքներ: Համայնքներից 7-ը սահմանամերձ են: Մարզը արևմուտքից և հարավից սահմանակից է Թուրքիային, հյուսիսում սահմանակից է ՀՀ Արագածոտնի մարզին, արևելքից՝ Երևանին և ՀՀ Արարատի մարզին: ՀՀ պետական սահմանից մարզին բաժին է ընկնում 130.5 կմ հատված:

Մարզը զբաղեցնում է ՀՀ տարածքի 4.2 %-ը (տարածքը՝ 1242 քառ.կմ), 1քառ. կմ-ի վրա ապրում է 251 մարդ: Մարզի բնակչությունը 2011թ. ապրիլի 1-ի դրությամբ կազմում է 286.2 հազ. մարդ, որից 102.1 հազ. բնակվում են քաղաքներում: Արմավիրի մարզը բնակչության բացարձակ թվով զբաղում է միջին տեղ, բայց առաջինն է բնակչության խտության ցուցանիշով: ՀՀ Արմավիրի մարզի տարածաշրջանի ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 595,3 կմ, որից՝ միջպետական նշանակության ճանապարհները - 109.0 կմ, Հանրապետական նշանակության ճանապարհները - 96.1 կմ, մարզային նշանակության ճանապարհները - 279.9 կմ, համայնքային նշանակության ճանապարհները - 110.3 կմ:

ՀՀ Արմավիրի մարզին բաժին է ընկնում հանրապետությունում թողարկված արդյունաբերական արտադրանքի ծավալի մոտ 4%-ը և գյուղատնտեսական համախառն արտադրանքի ծավալի շուրջ 17.6%-ը:

Եկամուտների հիմնական մասը առաջանում է գյուղատնտեսական գործունեությունից: Չնայած մարզի գյուղացիական տնտեսությունները հիմնականում ունեն սեփական հող, այնուամենայնիվ զիջում են քաղաքային տնտեսություններին և եկամտային, և մարդկային աղքատության առումով, և հիմնական կապիտալի առկայությունը չի նպաստում աղքատության կրճատմանը: Մարզում 97066.9

հեկտար գյուղատնտեսական նշանակության հողերից 61592.3 հեկտարը ոռոգելի են: Շուրջ 19000 հա գյուղատնտեսական նշանակության ոռոգելի հողեր չեն մշակվում հիմնականում ոռոգման ջրի պակասի, ներտնտեսային ցանցերի բացակայության, կրկնակի աղակալված լինելու, ինչպես նաև առանձին գյուղացիական տնտեսությունների ցածր վճարունակության և արտագնա աշխատանքի մեկնելու պատճառով:

Մարզում գյուղատնտեսական արտադրությունը հիմնականում կազմակերպվել է 50634 գյուղացիական տնտեսությունների միջոցով:

ՀՀ Արմավիրի մարզի համայնքներում վերջին տարիներին որոշ ծրագրեր են իրականացվել ճանապարհաշինության, սոցիալական ենթակառուցվածքների, գազաֆիկացման և բնակարանաշինության բնագավառներում: Մարզային զարգացման ծրագրի շրջանակում ևս մարզում վերանորոգվել և բարեկարգվել են համայնքային ճանապարհներ, դպրոցներ, պոլիկլինիկաներ, հիվանդանոցներ, խմելու ջրի և ոռոգման համակարգեր:

Երկրի տարածքային սոցիալ-տնտեսական զարգացման անհամաչափությունները սոցիալական ու տնտեսական զարգացման մակարդակների շեղումներն են, որոնք որպես արդյունք խոչընդոտում են տնտեսական աճն ու կայուն մարդկային զարգացումն ինչպես տարածքներում, այնպես էլ ամբողջ երկրում: Հայաստանի տարածքների բնակլիմայական առանձնահատկությունները, արտադրողական ուժերի ու բնական ռեսուրսների անհամաչափ բաշխումը, տնտեսական զարգացման, սոցիալական, ժողովրդագրական ու մշակութային տարբերությունները պայմանավորել են տարածքային միավորների զարգացման մակարդակների անհամաչափություններ: Շուկայական տնտեսությանն անցման փուլում, սկսած 2000-ականներից, այդ անհամաչափություններն էլ ավելի են խորացել և շարունակում են անընդմեջ խորանալ՝ հասնելով մտահոգիչ մակարդակի: Տնտեսական զարգացումը կենտրոնացել է Երևանում և որոշակի, խիստ սահմանափակ թվով մարզերում (հիմնականում՝ Սյունիք, Կոտայք), որպես արդյունք՝ առաջացնելով երկրի տարածքներում բնակչության կենսամակարդակի/աղքատության ու մարդկային զարգացման բնութագրիչների խիստ արտահայտված տարբերություններ:

2013-2014 ուսումնական տարում մարզի հանրակրթական դպրոցներում աշխատում են թվով 3287 ուսուցիչներ, աշակերտ-ուսուցիչ թվերի հարաբերակցությունը 10.9 է, աշակերտների միջին խտությունը դասարաններում՝ 20.9:

Արմավիրի մարզում ներկայումս գործում են նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող 6 ուսումնական հաստատություններ՝ Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ, Արմավիրի պետական ինդուստրիալ-մանկավարժական քոլեջ, Արմավիրի արվեստի պետական քոլեջ, Էջմիածնի պետական քոլեջ, Արմավիրի բժշկական քոլեջ և Էջմիածնի արհեստագործական պետական ուսումնարան:

Համաձայն ՀՀ կառավարության 2013 թվականի օգոստոսի 22-ի նիստի N33 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած՝ «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի ռազմավարության և փորձնական ծրագրի, 2014 թվականից ներդրվել է կայուն դպրոցական սննդի համակարգը: Այդ նպատակով ՀՀ պետական բյուջեից կտրվեն համապատասխան հատկացումներ՝ ըստ տարիների: 2014 թվականից դպրոցական սննդի ծրագրում կներառվեն Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի, իսկ 2015 թվականից նաև Արարատի մարզի հանրակրթական դպրոցների տարրական դասարաններում և դպրոցին նախապատրաստման խմբերում (նախակրթարաններում) ընդգրկված բոլոր սովորողները: Ընդ որում, ծրագրում ընդգրկվող երեխաների թիվը ենթակա է ճշտման յուրաքանչյուր տարի՝ նոր ուսումնական տարվա փաստացի կոմպլեկտավորման արդյունքում: Եռամյա ծրագրի արդյունքների հիման վրա 2016 թվականից հետո այն աստիճանաբար կտարածվի մյուս մարզերում նույնպես: Միաժամանակ 2014-2016թթ. կշարունակվի ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիր (ՊՀԾ) դպրոցական սննդի ծրագիրը հանրապետության 9 մարզերում, ընդգրկելով տարրական դասարանների շուրջ 67000 սովորողների:

Մարզում առկա է համայնքային ենթակայության 85 մշակույթի տուն, որից Արմավիրի տարածաշրջանում՝ 38, Էջմիածնի տարածաշրջանում՝ 40, Բաղրամյանի տարածաշրջանում՝ 7: Մշակույթի տներից լիարժեք գործում են 16-ը: Մարզի մշակույթի տները հիմնականում անցյալ դարի 60-70-ական թվականների կառույցներ են, այդ իսկ պատճառով կարիք ունեն վերանորոգման, որը համայնքը միայն իր սեփական միջոցներով չի կարող իրականացնել: Արմավիրի մարզում գործում են 102 գրադարաններ, որոնցից 1-ը ՀՀ մշակույթի նախարարության ենթակայությամբ, 12-ը՝ քաղաքային, 89-ը՝ գյուղական: Գրադարանային ֆոնդը կազմում է 1161830 կտոր գիրք՝ ՀՀ մշակույթի նախարարության, Հայաստանի գրողների միության, «Գիրք» հիմնադրամի, «Արևիկ» հրատարակչության, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից կատարված նվիրաբերությունների շնորհիվ:

Գործում է 9 թանգարան. Սարդարապատի հուշահամալիր-Հայաստանի ազգագրության և ազգային ազատագրական պայքարի պատմության պետական թանգարան, Մուսալեռի հուշահամալիր-թանգարան, Զվարթնոց պատմաճարտարապետական արգելոց-թանգարան, Էջմիածնի գավառագիտական թանգարան, Էջմիածնի Խորեն Տեր-Հարությանի անվան թանգարան, Էջմիածնի Հովհաննես Հովհաննիսյանի տուն-թանգարան, Մեծամորի պատմահնագիտական թանգարան, Մհեր Աբեղյանի անվան թանգարան, Բաղրամյանի «Արաբոյի և ֆիդայիների հայրենասիրական թանգարան», որոնց հավաքածուները պարբերաբար համալրվում են նոր թանգարանային նմուշներով՝ հնագիտական նոր նյութերի և անհատների կողմից կատարած նվիրաբերությունների շնորհիվ:

Արմավիրի մարզի պատմամշակութային արժեքներն են՝ սբ. Էջմիածին Մայր Տաճարն իր Գանձատնով, Մեծամորի և Զվարթնոցի հնագիտական թանգարանները, Հայաստանի Ազգագրական պետական թանգարանը Սարդարապատում, Զվարթնոց տաճարը, Հայաստանի ստորերկրյա ջրերի ամենամեծ ելքը՝ Այդր լիճը, «Մուսալեռ» և «Սարդարապատ» հուշահամալիրները: Էջմիածին քաղաքի եկեղեցիները և Զվարթնոց հնագիտական վայրը ընդգրկված են ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցանկում:

Մարզում գործում է 9 մարզադպրոց, ինչպես նաև նշված մարզադպրոցների մասնաճյուղեր մարզի տարբեր համայնքներում: Համայնքային ենթակայության մարզադպրոցներում գործում են 92 խմբեր՝ 13 մարզաձևերից: Արտադպրոցական և արտադասարանական մարզական խմբերի պարապմունքներում ընդգրկված են դպրոցահասակ երեխաների 30-40%-ը: Մարզի հանրակրթական դպրոցներում և համայնքներում գործում են 189 խմբեր՝ 20 մարզաձևերից: Արմավիրի մարզում մարզպետարանի ենթակայությամբ գործող մարզադպրոցներ չկան: գործում են 61 առողջապահական հիմնարկներ, որոնցից 7-ը՝ մարզպետարանի ենթակայության, այդ թվում՝ բժշկական կենտրոններ - 2 (Արմավիր, Մեծամոր), հիվանդանոց - 1 (Վաղարշապատ), ծննդատուն - 1 (Վաղարշապատ), պոլիկլինիկա - 2 (Վաղարշապատ, Բաղրամյան), արյան փոխներարկման կայան - 1 (Արմավիր):

Համայնքային ենթակայության թվով 52 «Գյուղական բժշկական ամբուլատորիա» ՓԲԸ-ներ ընդգրկում են 43 բուժակմանկաբարձական կետեր:

ՀՀ Արագածոտնի մարզի տնտեսության հիմքն արդյունաբերությունը և գյուղատնտեսությունն են՝

1) Արդյունաբերությունը մասնագիտացած է սննդամթերքի և ըմպելիքի, թանկարժեք իրերի արտադրության ու շինանյութերի հանքավայրերի շահագործման

ուղղություններում: Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են ինչպես բուսաբուծության (հացահատիկ, կարտոֆիլ, բազմամյա տնկարկներ, կերային մշակաբույսեր), այնպես էլ անասնաբուծության զարգացման համար:

2) Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է բուսաբուծության (մասնավորապես հացահատիկային մշակաբույսերի արտադրություն) և անասնաբուծության մեջ:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով:

Մարզկենտրոն Աշտարակ քաղաքը (2012թ. տարեվերջին՝ 18.8 հազ. բնակիչ) գտնվում է Քասախ գետի ափին, Երևանից 19 կմ հյուսիս-արևմուտք: Քաղաքը հանդիսանում է Երևան-Գյումրի, Երևան-Սպիտակ ճանապարհների հանգույցը:

Աշտարակ-Ապարան ճանապարհին կառուցվել է 33 մ բարձրություն ունեցող խաչ, որը բաղկացած է 1 712 հատ փոքր խաչերից: Փոքր խաչերը խորհրդանշում են հայ ազգի քրիստոնեության ընդունման 1 712 ամյակը:

Աշտարակ քաղաքի տնտեսության առաջատար ճյուղը սննդամթերքի և ըմպելիքի արտադրությունն է:

Մարզի տարածքով անցնում է Արգնի-Շամիրամ ջրանցքը, գործում է նաև Թալինի ջրանցքը: Մարզն աչքի է ընկնում ջրամբարների առատությամբ: Գործում են Ապարանի, Հալավարի, Ծիլքարի, Ներքին Սասնաշենի, Դավթաշենի, Թալինի, Վերին Բազմաբերդի, Կաքավաձորի, Շենիկի, Աշնակի ջրամբարները: Դրանցից ամենախոշորը Ապարանի ջրամբարն է, որի հայելու մակերեսը 780 հա է, իսկ ծավալը՝ 91 միլիոն խմ: Գոյություն ունեն գրունտային և արտեզյան ջրերի խոշոր պաշարներ:

Մարզում կա 8480 հա անտառաշերտ: Մարզի մարզի տարածքով են անցնում հանրապետական նշանակության 3 ավտոմայրուղիները՝ Երևան Աշտարակ-Թալին-Գյումրի, Երևան-Աշտարակ-Սպիտակ և Երևան-Արմավիր-Քարակերտ-Գյումրի: Մարզի տարածքը հատում է նաև ՀՀ գլխավոր երկաթուղին (միայն ծայր արևմտյան հատվածով և մարզի տնտեսական զարգացման վրա էական ազդեցություն չի թողնում):

Մարզը հանրապետության գիտական խոշոր կենտրոններից է: Աշտարակի տարածաշրջանում գործում են ՀՀ Գիտությունների ակադեմիայի 6 գիտահետազոտական ինստիտուտ և կոնսորցիումների Դրանց թվում է նաև Բյուրականի աշխարհահռչակ աստղադիտարանը: Մարզն նաև ունի հանգստյան գոտիների լայն ցանց, որոնք հիմնականում տեղավորված են Բյուրականի անտառային գոտում: Զբոսաշրջության զարգացման համար կան նպաստավոր պայմաններ:

Արագածոտնի մարզի գյուղական գրեթե բոլոր համայնքների գյուղատնտեսական ուղղվածությունը անասնապահությունն է և բուսաբուծությունը: Որոշ համայնքներ զբաղվում են նաև այգեգործությամբ և գյուղատնտեսական մթերքների վերամշակմամբ: Ընդ որում այգեգործությամբ և գյուղատնտեսական մթերքների վերամշակմամբ զբաղվելու ներուժ ունեցող համայնքների թիվն ավելի մեծ է, քան գործունեության այդ տեսակներով զբաղվող համայնքների փաստացի թիվը: Մարզում ներկայումս գործում են 37800 գյուղացիական տնտեսություններ: Այդ ցուցանիշով մարզը երկրում չորրորդն է: Ամեն տարի ավելանում են 100-120 տնտեսություններ: Սակայն, հաշվարկները վկայում են, որ գյուղատնտեսության ընդլայնումը չի զուգակցվում արդյունավետության բարձրացմամբ: Այսպես, ԱՎԾ-ի տվյալները վկայում են, որ մեկ հեկտար գյուղատնտեսական նշանակության հողի տնտեսական արդյունքը Արագածոտնի մարզում 2012 թվականին կազմել է ընդամենը 457.2 հազար դրամ: Կարելի է փաստել, որ գյուղատնտեսության էքստենսիվ զարգացումը, չնայած ապահովում է մարզի բնակչության զբաղվածության մոտ 80%-ը, այնուամենայնիվ չի խթանում մարզի գյուղացիական տնտեսությունների եկամուտների աճը:

Մարզում բնակչության սեփականության գյուղատնտեսական հողատեսքերը կազմում են 50072.1 հեկտար, որից ոռոգովի է 21853.4 հեկտարը: Սակայն փաստացի ոռոգվում է 16182.3 հեկտարը: Փաստացի ոռոգվող հողատեսքերը կազմում են սեփականաշնորհված հողատեսքերի ընդամենը 32.3 %-ը: 39 համայնքում ոռոգման ջուր ընդհանրապես չկա: 23 համայնքում ոռոգվում է ընդամենը 10-40 հեկտար հողատարածք: Դրանք հիմնականում Թալինի և Արագածի տարածաշրջանների բարձրլեռնային բնակավայրերն են, որտեղ գյուղատնտեսության վարման

հնարավորությունները սահմանափակ են: Ոռոգման ջրի բացակայությունն այդ բնակավայրերում ոլորտն առավել անարդյունավետ է դարձնում:

Արդյունաբերությունը հանդիսանում է Արագածոտնի մարզի տնտեսության կարևորագույն ոլորտներից մեկը: Ներկայումս Արագածոտնի մարզի արդյունաբերությունը մասնագիտացած է էլեկտրաէներգիայի, սննդամթերքի, ըմպելիքի, ալկոհոլային խմիչքի արտադրության ու ոչ մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման ուղղությամբ:

Արագածոտնի մարզի հիմնական ցուցանիշները ներկայացված են ստորև աղյուսակում.

Տարածքը	2 756 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	9.3 %
Քաղաքային համայնքներ	3
Գյուղական համայնքներ	111
Քաղաքներ	3
Գյուղեր	117
Բնակչության թվաքանակը 2012թ. տարեվերջին	133.0 հազ. մարդ
այդ թվում՝	
քաղաքային	30.6 հազ. մարդ
գյուղական	102.4 հազ. մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2012թ.	4.4 %
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	23.0 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր	218 239.8 հա
այդ թվում՝ վարելահողեր	54152.7 հա

Կոտայքի մարզն ունի 67 համայնք, այդ թվում՝ 7 քաղաքային: Մարզի փաստացի տարածքը կազմում 2076 քառ. կմ:

Կոտայքի մարզի բնակչության թիվը 2014թ.-ի հունվարի 1-ի կազմել է 254.7 հազար մարդ, որը կազմում է հանրապետության ողջ բնակչության մոտ 8.6%-ը, որից շուրջ 56% քաղաքաբնակներ են, իսկ 44%-ը՝ գյուղաբնակներ (43.9%):

Մարզը հարուստ է օգտակար հանածոների՝ ոսկու, ալյումինի, երկաթի, պերլիտի, մարմարի, գրանիտի, լիթոիդային պեմզայի, նեֆելենային սիենիտների, անդեզիտի, հրաբխային խարամների, բազալտի, քարաղի, զանազան շինարարական նյութերի և հանքային ջրերի 3 խոշոր հանքավայրերով (Հանքավան, Բջնի, Արզնի):

Մարզում հողերի նպատակային ֆոնդը ներկայացված է հետևյալ կերպ.

NN	Նպատակային Նշանակություն	Հողատեսք, գործառնական նշանակություն	Ընդամենը (հա)
1	2	3	4
1.1	1. Գյուղատնտեսական	վարելահողեր	37750.4
1.2		բազմամյա տնկարկներ, բնդամենը	2779.6
1.2.1		այդ թվում՝ պտղատու այգիներ	2342.3
1.2.2		խաղողի այգիներ	436.1
1.2.3		այլ բազմամյա տնկարկներ	1.2
1.3		խոտհարքներ	11257.0
1.4		արոտավայրեր	78992.0
1.5		այլ հողատեսքեր	23843.1
1		Ընդամենը	154622.1
2.1	2.Բնակավայրերի	բնակելի կառուցապատման	10251.7
2.1.1		այդ թվում՝ տնամերձ հողեր	8099.3
2.1.2		այգեգործական (ամառանոցային)	1509.5
2.2		հասարակական կառուցապատում	1318.3
2.3		խառը կառուցապատման	136.1
2.4		ընդհանուր օգտագործման հողեր	1970.9
2.5		այլ հողեր	2132.0
		Ընդամենը	15809.0
3.1	3. Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների	արդյունաբերական օբյեկտներ	1033.8
3.2		գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ	1614.4
3.3		պահեստարաններ	93.8
3.4		ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասեր	684.2
3		Ընդամենը	3426.1
4.1	4.Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակա- ռուցվածքների օբյեկտների	Էներգետիկայի	379.0
4.2		կապի	45.9
4.3		տրանսպորտի	738.9
4.4		կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների	252.9
4		Ընդամենը	1416.5

1	2	3	4
5.1	5. Հատուկ պահպանվող տարածքների	բնապահպանական հողեր	5714.5
5.1.1		այդ թվում՝ արգելոցներ	
5.1.2		արգելավայրեր	5714.5
5.1.3		ազգային պարկեր*	
5.2		առողջարարական նպատակներով նախատեսված հողեր	36.9
5.3		հանգստի համար նախատեսված հողեր	1619.1
5.4		պատմական և մշակութային հողեր	1289.6
5		Ընդամենը	8660.0
6	6. Հատուկ նշանակության	Ընդամենը	720.3
7.1	7. Անտառային	անտառներ	18332.9
7.2		թփուտներ	575.0
7.3		վարելահողեր	26.0
7.4		խոտհարքներ	2503.7
7.5		արոտներ	919.4
7.6		այլ հողեր	575.6
7		Ընդամենը	22932.5
8.1	8. Ջրային	գետեր	336.8
8.2		ջրամբարներ	134.6
8.3		լճեր	207.3
8.4		ջրանցքներ	221.8
8.5		հիդրոտեխնիկական և ջրատնտեսական այլ օբյեկտներ	66.3
8		Ընդամենը	966.7
9	9. Պահուստային		0
ԸՆԴԱՄԵՆԸ ՀՈՂԵՐ			208553.2

ՀՀ Կոտայքի մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերն են: Արդյունաբերությունը հանդիսանում է Կոտայքի մարզի տնտեսության կարևորագույն ոլորտներից մեկը: Մարզի արդյունաբերական արտադրության ծավալի ներուժը կենտրոնացված է հիմնականում քաղաքային համայնքներում՝ Հրազդան, Չարենցավան, Աբովյան, Նոր Հաճրն, Եղվարդ, Բյուրեղավան քաղաքներում:

Մարզում մեծ թիվ են կազմում էներգետիկայի, մեքենաշինական, սննդի արդյունաբերության, քարամշակման, հանքարդյունահանման, ձկնաբուծության,

շինանյութերի, փայտամշակման և այլ ձեռնարկությունները: Այս ձեռնարկությունների կողմից թողարկվող արտադրանքի մեծ մասն իրացվում է տեղական շուկայում, մյուս մասը արտահանվում է արտերկիր:

Մարզի արդյունաբերության զարգացած ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որտեղ առավել զարգացած են հետևյալ ճյուղերը.

1) սննդամթերքի և ըմպելիքի արտադրություն (մսի և մսամթերքի մշակում և պահածոյացում, մրգերի և բանջարեղենի մշակում և պահածոյացում, կաթնամթերքի, ալյուրի, ըմպելիքի արտադրություն),

2) ոչ մետաղական հանքային այլ արտադրանքի արտադրություն (ապակու և դրանից պատրաստվող իրերի արտադրություն, ցեմենտի արտադրություն),

3) մետաղագործական արդյունաբերություն և մետաղե արտադրատեսակների արտադրություն (պողպատե և թուջե ձուլվածքներ),

4) թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի արտադրություն և մշակում:

ՓՄՁ սուբյեկտների շրջանառության ծավալների տեսակարար կշիռը երկրի համախառն ներքին արդյունքում կազմել է մոտ 27 %:

Կոտայքի մարզի գյուղատնտեսական հողատեսքերն ընդգրկում են մարզի ընդհանուր տարածքի 76.8%-ը (154639.9 հա): Մարզը սահմանամերձ չէ և ըստ բնակլիմայական պայմանների բաժանվում է լեռնային և բարձր լեռնային գոտիների: Մարզում ըստ բարձունքային գոտիականության հանդիպում են Հանրապետության տարածքին բնորոշ կլիմայի գրեթե բոլոր տեսակները:

Անասնաբուծությունն ու բուսաբուծությունը մարզի գյուղատնտեսության կարևորագույն ճյուղերից են: Մարզում են գործում հանրապետության 3 խոշոր՝ Լուսակերտի, Արզնու եւ Գետամեջի թռչնաֆաբրիկաները:

Կոտայքի մարզի ընդհանուր օգտագործման ավտոճանապարհային ցանցի երկարությունը կազմում է 598,9 կմ, որից 471.1 կմ միջպետական և հանրապետական նշանակության է, 127,8 տեղական նշանակության:

Մարզի արդյունաբերական արտադրանքի արտադրությունն ըստ տնտեսական գործունեության տեսակների հետևյալն է.

	Թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով, (մլն.դր.)	Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով, (մլն.դր.)
Ամբողջ արդյունաբերությունը	104682.2	103603.3
այդ թվում՝		
Հանքարդյունագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	443.2	456.103
այդ թվում՝		
Մետաղական հանքաքարի արդյունահանում		
Հանքագործական արդյունա- բերություն և բացահանքերի շահագործման այլ ճյուղ	443.2	456.103
Մշակող արդյունաբերություն	74901.589	73809.796
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	1088.122	1088.122
Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	28249.332	28249.331

Մարզի արտաքին առևտրի բաշխվածությունը (ըստ բեռնամաքային հայտարարագրերի տվյալների, առանց ֆիզիկական անձանց կողմից կատարված առևտրի ծավալների) հետևյալն է.

Արտահանում		Ներմուծում	
Ծավալը, հազ. դոլար	Տեսակարար կշիռը, %	Ծավալը, հազ. դոլար	Տեսակարար կշիռը, %
111789.9	8.6	128291.5	3.5

Մարզի տարածքում գործող կրթական հաստատությունների քանակը հետևյալն է.

Կրթական հաստատություններ	93
այդ թվում՝	
-միջնակարգ հանրակրթական	59
-հիմնական	31
-հատուկ (օժանդակ)	1
-նախնական մասնագիտական արհեստագործական հաստատություն	2
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ	25
Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	3
Մասնավոր դպրոց	1
Պետական բարձրագույն ուսումնական հաստատություն	2
Տարբեր ենթակայության կրթահամալիր	2
Գրադարան	72
Մշակույթի տներ և ակումբներ	62
Պատկերասրահ	1
Երաժշտական ստուդիա	2
Գեղարվեստի ստուդիա	1
Մանկապատանեկան մարզադպրոց	15
Թանգարան	6
Թատրոն	2

▪ **Հողերի տնտեսական յուրացման բնութագիր**

Ինչպես արդեն նշվել է առաջին փուլի երկրաֆիզիկական մեթոդներով աշխատանքներն իրականացվելու են ՀՀ Արմավիրի մարզի Տալվորիկ, Հուշակերտ, Նոր Ամասիա, Նոր Արմավիր, Նոր Կեսարիա և Նալբանդյան, ՀՀ Արագածոտնի մարզի Օրգով, Բյուրական և Տեղեր, ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ համայնքների տարածքներում:

ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ քաղաքային համայնքի մակերեսը 206կմ², բնակչությունը 25504 մարդ: Եղվարդ համայնքը բազմաբնակավայր համայնք է:

Համայնքի կենտրոնն է հանդիսանում Եղվարդ քաղաքը: Համայնքի կազմում ընդգրկված են նաև Արագյուղ, Բուժական, Զովունի, Զորավան, Սարալանջ բնակավայրերը: Համայնքն իր վարչական սահմաններով սահմանակից է Զարենցավան, Թեղենիք, Քարաշամբ, Նոր Գեղի, Նոր Արտամետ, Մրգաշեն, Քանաքեռավան, Քասախ, Պռոշյան, Նոր Երզնկա, Երևան համայնքներին և Արագածոտնի մարզին:

ՀՀ Արագածոտնի մարզի Օրգով համայնքի բնակչությունը կազմում է 593 մարդ, որից 48% տղամարդիկ են, 52%՝ կանայք: Բնակչության մեջ մինչաշխատունակները կազմում են 20%, աշխատունակները՝ 56%, հետաշխատունակները՝ 24%: Գյուղն ունի 219 տնտեսություն: Ունի դպրոց, գրադարան, բուժկետ, կապի հանգույց: Համայնքի տնտեսության մասնագիտացման ուղղությունը գյուղատնտեսությունն է: Գյուղատնտեսական հողահանդակների հիմնական մասն օգտագործվում է որպես պտղատու այգիներ, վարելահողեր, արոտավայրեր, խոտհարքեր: Զբաղվում են պտղաբուծությամբ, ծխախոտագործությամբ, բանջարաբուստանային, հացահատիկային, կերային կուլտուրաների մշակությամբ: Պահուստային հողերը զբաղեցնում են համայնքի մակերեսի մոտ 60%, որոնք բաշխված են հետևյալ կերպ. արոտավայրեր՝ 185 հա, վարելահողեր՝ 2հա, խոտհարքեր՝ 5 հա: Զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությամբ, թռչնաբուծությամբ, մեղվաբուծությամբ: Արդյունաբերություն չունի:

ՀՀ Արագածոտնի մարզի Բյուրական համայնքի մակերեսը 21.27կմ² է, բնակչությունը կազմում է 4590 մարդ, որից 47% տղամարդիկ են, իսկ կանայք՝ 53%: Մինչաշխատունակ տարիքի բնակչությունը կազմում է 26%, աշխատունակ տարիքի ներկայացուցիչները՝ 59%, հետաշխատունակները՝ 15%: Գյուղն ունի 1551 տնտեսություն: Ունի դպրոց, գրադարան, մանկապարտեզ, կապի հանգույց: Արդյունաբերության ոլորտում զարգացած է որմնաքարի արտադրությունը՝ կառուցված է ուղիղ կտրվածքի տուֆ քարի արտադրամաս, որն օգտագործում է սեփական հումքը: Գյուղի տնտեսության մեջ մեծ բաժին ունի գյուղատնտեսությունը: Զբաղվում են դաշտավարությամբ, պտղաբուծությամբ: Շատ են ընկուզենու եւ մրգատու այգիները, որոնք տեղաբաշխված են տնամերձ հողակտորներում: Մշակում

են հացահատիկ, կերային կուլտուրաներ, բանջարաբուստանային կուլտուրաներ: Պահուստային հողերը օգտագործվում են որպես վարելահողեր եւ արոտավայրեր: Զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասնապահությամբ՝ կաթնամսատու ուղղությամբ, թռչնաբուծությամբ:

ՀՀ Արագածոտնի մարզի Տեղեր համայնքի մակերեսը կազմում է 14.15կմ², բնակչության թիվը կազմում է 262 մարդ : Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 42%, կանայք՝ 58%: Բնակչության մեջ մինչաշխատունակ տարիքի բնակիչները կազմում են 17%, աշխատունակները՝ 63%, հետաշխատունակները՝ 20%: Գյուղն ունի առկա 117 տնտեսություն: Ունի բուժկետ, կապի հանգույց դպրոց: Համայնքի տնտեսության մասնագիտացման ուղղությունը գյուղատնտեսությունն է: Գյուղատնտեսական համախառն բերքի մեծ մասը բաժին է ընկնում անասնապահությանը: Զբաղվում են խոշոր եւ մանր եղջերավոր անասնաբուծությամբ: Զբաղվում են բանջարաբուստանային, հացահատիկային, կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղացիների սեփականություն հանդիսացող հողահանդակները գրեթե ամբողջովին օգտագործվում են որպես խոտհարքեր՝ կազմելով մոտ 82 հա: Տնամերձ հողակտորներում կան բազմամյա տնկարկներ: Պահուստային հողահանդակներն օգտագործվում են որպես արոտավայրեր, կազմելով 1064 հա:

ՀՀ Արմավիրի մարզի Տավորիկ համայնքի հողային ֆոնդը ներկայացված է հետևյալ կերպ.

Համայնքի հողային տարածքը	1791,33
Գյուղատնտեսության նշանակության հողեր	1711,4
Արդյունաբերական, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր	0,25
Էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների համար	28,46
Հատուկ պահպանվող տարածքներ /այդ թվում պատմական և մշակութային հողեր	-
Հատուկ նշանակության հողեր	
Ջրային տարածք	11,52
Բնակավայրի տարածք	39,70

Համայնքի բնակչության թիվը կազմում է 328 մարդ, որից տղամարդիկ 51.8%, կանայք՝ 48.2%: Համայնքի գյուղացիական տնտեսությունները հիմնականում

զբաղվում են խաղողի, դեղձի, ծիրանի և բանջարաբուստանային կուլտուրաների արտադրությամբ: Վատն այն է, որ մշակվող հողատարածքների մի մասը ոռոգվում է պոմպակայանի միջոցով, սակայն կարիք կա երեք խորքային հորերի վերանորոգման: Անասնապահությամբ զբաղվողները հիմնականում արտադրում են կաթ և միս:

ՀՀ Արմավիրի մարզի Հուշակերտ համայնքի հողային ֆոնդը ներկայացված է հետևյալ կերպ.

Համայնքի հողային տարածքը	514.15
Գյուղատնտեսության նշանակության հողեր	470.1
Արդյունաբերական, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր	3.47
Էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների համար	47.0
Հատուկ պահպանվող տարածքներ /այդ թվում պատմական և մշակութային հողեր	3.10
Հատուկ նշանակության հողեր	-
Զբային տարածք	5.78
Բնակավայրի տարածք	61.79

Համայնքում ապրում է 1037 մարդ, որից 49% տղամարդիկ և 51% կանայք:

Համայնքի գյուղացիական տնտեսությունները զբաղվում են խաղողի, դեղձի, ծիրանի և բանջարաբուստանային կուլտուրաների մշակմամբ:

ՀՀ Արմավիրի մարզի Նոր Արմավիր համայնքի բնակչությունը կազմում է 1998 մարդ, որից կանայք 1031 մարդ, տղամարդիկ՝ 967: Համայնքի վարչական տարածքը 376 հա է, որից գյուղատնտեսական նշանակության հողերը՝ 296.6հա, բնակավայրերի հողերը՝ 136.4հա, էներգետիկայի և տրանսպերտի հողերը՝ 5.28հա, հատուկ պահպանվող հողերը՝ 2.56հա, ջրային ֆոնդը՝ 8.9հա, բնակավայրի հողերը՝ 175.89հա:

Համայնքում զարգացած են գյուղատնտեսության հետևյալ հիմնական ճյուղերը՝ խաղողի այգիներ, պտղատու այգիներ, բանջարաբուծություն:

ՀՀ Արմավիրի մարզի Նոր Կեսարիա համայնքի առկա բնակչությունը կազմում է 1575 մարդ, որից տղամարդիկ՝ 47% և կանայք՝ 53%: Համայնքի վարչական տարածքը կազմում է 1520հա, այդ թվում. վարելահողեր 823հա, բազմամյա տնկարկներ 90.51հա, դաշտային և գյուղամիջյան ճանապարհներ 31.2հա, տնամերձ հողեր 55հա, գերեզմանատուն 2հա, դպրոց 3.31հա, պատմության և մշակույթի հուշարձանների

հողեր 1300մ², հատուկ պահպանվող տարածքներ 3.27հա: Համայնքի գյուղատնտեսական արտադրանքի հիմնական տեսակներն են. ցորեն, գարի, եգիպտացորեն, չաման, առվույտ, բանջար-բոստանային կուլտուրաներ, ծառապտուղ, անասնապահություն, կաթ և միս:

ՀՀ Արմավիրի մարզի Նալբանդյան համայնքի բնակչությունը 4410 մարդ է, բնակչության 49% կազմում են տղամարդիկ և 51% կանայք: Նալբանդյան համայնքի վարչական տարածքը 2009 հա է, որից

գյուղատնտեսական նշանակության հողերը – 1510 հա,
բնակավայրային նշանակության հողեր – 369հա,
արդյունաբերական հողեր- 100.5 հա,
էներգետիկայի և տրանսպորտի հողեր- 24.6 հա,
հատուկ պահպանվող հողեր-21.95հա,
ջրայի ֆոնդի հողեր – 19.98 հա,
այլ հողեր – 129.18հա,
բնակավայրի հողեր – 300հա:

Համայնքում հիմնականում զբաղվում են հողագործությամբ: Կան անհատ ձեռնարկատերեր, որոնք զբաղված են հացի, հացամթերքի արտադրությամբ: Գործունեության բնագավառներն են՝ կաթնամթերք, հացամթերք, փայտամշակման, դռների և պատուհանների արտադրություն: Համայնքում զարգացած է գյուղատնտեսությունը հիմնական ճյուղերն են՝

1. խաղողի այգիներ տարեկան շուրջ 4000.0 տոննա
2. պտղատու այգիներ տարեկան շուրջ 4000.0 տոննա
3. բանջարաբուծություն տարեկան շուրջ 5000.0 տոննա:

ՀՀ Արմավիրի մարզի Ամասիա կամ Նոր Ամասիա համայնքի բնակչությունը կազմում է 1203 բնակիչ, այդ թվում տղամարդիկ 670, կանայք՝ 533: Համայնքի հողային ֆոնդը 401.48հա, գյուղատնտեսական նշանակության հողերը՝ 280.56հա, պահուստային ֆոնդի հողեր՝ 6.0հա, ջրային ֆոնդի հողեր՝ 157.5հա, բնակավայրի տարածք՝ 95.58հա, այգիներ՝ 143.41հա: Համայնքի բնակչության 85% զբաղվում է գյուղատնտեսությամբ:

Նավթի և գազի ուսումնասիրության աշխատանքների իրականացումը հնարավորություն կընձեռի համայնքներում ստեղծել լրացուցիչ աշխատատեղ՝ աշխատանքներին ներգրավվելով տեղի բնակչությունը: Նշված հարցը քննարկվել է համայնքների բնակիչների հետ:

▪ ***Պատմության, մշակութային հուշարձաններ***

ՀՀ Արմավիրի, ՀՀ Արագածոտնի և ՀՀ Կոտայքի մարզերի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը հաստատվել են համապատասխանաբար ՀՀ կառավարության 03.10.2002թ.-ի N 1589-Ն, 29.05.2002թ.-ի N 628 և 24.12.2003թ.-ի N 1793-Ն որոշումներով:

Նավթի և գազի երկրաբանական ուսումնասիրության ծրագրի առաջին փուլի երկրաֆիզիկական բնույթի աշխատանքների իրականացման համար ընտրված տարածքները գտնվում են համայնքների պատմության և մշակույթի հուշարձանների հողերից զգալի հեռավորությունների վրա:

Հետևաբար, աշխատանքների արդյունքում որևիցե բացասական ազդեցություն հուշարձանների վրա չի դրսևորվելու:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Նավթի և գազի երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող 2-րդ պայմանական տարածքում ընկերության կողմից ծրագրավորվող աշխատանքների ընթացքում աննշան տեխնածին ճնշումներ են դրսևորվելու մթնոլորտի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա:

Մթնոլորտային օդ.

Աշխատանքների ընթացքում կիրառվող ավտոտրանսպորտը դառնալու է վնասակար գազերի և փոշու արտանետման աղբյուր, փոշեգոյացում տեղի է ունենալու նաև փորձնական հանույթի բացահանքի սահմաններում:

Համաձայն շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերվող նախագծման նորմերի (СНИП 11-01-95, СНИП 1.02.01-85)՝ սահմանային թույլատրելի խտությունները ածխածնի օքսիդի, ազոտի օքսիդի, մրի և ծծմբային գազի համար համար համապատասխանաբար կազմում են $0,0005\text{գ/մ}^3$; $0,000085\text{գ/մ}^3$; $0,00015\text{գ/մ}^3$; $0,0005\text{գ/մ}^3$:

Նախնական հաշվարկներին համաձայն, աշխատանքների ընթացքում վնասակար գազերի (ազոտի օքսիդ, ածխածնի երկօքսիդ, մուր) առավելագույն կոնցենտրացիաները չեն գերազանցելու նորմատիվային փաստաթղթերով ամրագրված սահմանային թույլատրելի խտությունները:

Ջրային ավազան. Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ երկրաֆիզիկական մեթոդներով ուսումնասիրության աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Հողային ծածկույթ.

Ընտրված տարածքների սեյսմիկ տեղազննման և գրավիհետախուզական (պրոֆիլային) աշխատանքների կատարման ընթացքում հողային ծածկույթի խախտում չի նախատեսվում: Փոխադրումների իրականացման ժամանակ օգտագործվելու են միայն գոյություն ունեցող ճանապարհները:

Բուսական և կենդանական աշխարհ.

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների բացասական ազդեցությունը տեղամասի տարածաշրջանի բուսական և կենդանական աշխարհի վրա գրեթե զրոյական է:

Ստորև բերվում է շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցության նախնական գնահատական մատրիցը.

Շրջակա միջավայրի բաղադրիչներ	Գործողություններ		
	Մոտեցնող ճանապարհների անցում	Փորձական բացահայտի անցում	Հորատման աշխատանքներ
Մթնոլորտային օդ	աննշան	աննշան	աննշան
Ջրեր	-	-	-
Հողեր	աննշան	աննշան	աննշան
Կենսաբազմա- զանություն	աննշան	աննշան	աննշան
Պատմամշակութային հուշարձաններ	-	-	-

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Նավթամթերքների պահեստավորում և պահում արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ), որի տրվում է համապատասխան թեքություն, որն ապահովում է թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը:
- Օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարրաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար :
- Հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնվում որպես մետաղական ջարդոն :
- Կենցաղային աղբի տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր :
- Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում :
- Փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին :
- Կեղտաջրերի հավաքում հորատիպ գուգարանում, որը հետագայում դատարկում են հատուկ ծառայության ուժերով :
- Խախտված տարածքների ռեկուլտիվացիա :
- Երկրաբանական ուսումնասիրության համար նախատեսված տարածքում բուսականության դիտարկում՝ ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսական և կենդանական տեսակներ բացահայտման նպատակով: Նման բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով նախատեսվում է.

1) առանձնացնել պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով,

2) ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են

բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը,

3) տեղափոխել պահպանվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրում են համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումները չի նախատեսվում, քանի որ աշխատանքների տեխնոլոգիան և մեթոդաբանությունը բացառում է որևիցե բացասական ազդեցությունների դրսևորում:

Նավթի և գազի երկրաֆիզիկական մեթոդներով ուսումնասիրություն իրականացնող անձնակազմի համար կնախատեսվի համապատասխան հաղորդակցման համակարգ (ինֆորմացիոն և շարժական կապ), որով հնարավոր է կապ հաստատել ձեռնարկության վարչական կազմի, տեղական ինքնակառավարման մարմինների, շտապ օգնության հետ:

Գրականություն

1. ՀՀ Բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ -ի տվյալներ, 2015թ.
2. Почвы Армянской ССР. Ред./ Р.А. Эдилян, Г.П. Петросян, Н.Н. Розов. Ереван: “Айастан”, 1976 г.
3. Հայաստանի բույսերի Կարմիր Գիրք.– 2010թ.
4. Հայաստանի կենդանիների Կարմիր Գիրք.– 2010թ
5. Флора Армении / под ред. А.Л.Тахтаджяна. – Ереван: изд-во АН Арм ССР
6. Животный мир Армянской ССР. Даль С.К ,1954
7. ՀՀ Արմավիրի, ՀՀ Արագածոտնի և ՀՀ Կոտայքի մարզպետարանի պաշտոնական կայքեր